

# ԼՈՅՍ

ՕՅՅ Իձձձ ԸԿԿ  
 »Օ  
 ՌՅ ըՅ ճՅ ԻՅ ԻՅ Կ  
 »ճԻՅՅ յՅ ձՅ ձՅ»ճձ

Ձ ճԻ ըԿՅ Ի շճ »Օ · ԸԸՅ ձձճ  
 ԸՅՍճ · Շճ

¾1. ՚Յ Օ1Յ ըՅ ճՅՅ Կ

Օ ձձ Կ ճԻՕ ՌՅ ՍՅ ճ  
 1 5 1 7 5 - 1 1 7  
 ԱՅձճճ Կ - Ձճճ Կ

Ձ»ձՅ ԸՅձ 6 4 9 5 1 8 0

E-mail : louys@dpir.com

Համար 1  
 15 Ապրիլի , 2000թ.

Գինը՝ 3000 ռիալ

# LOUYS

Armenian Cultural  
 and Social Biweekly

No. 2 , 15 April, 2000

Editor-in-Chief  
 Ed. Baghdasarian

POBox 15175-117  
 Tehran – Iran  
 Tel. (0098 – 21) 6495180  
 E-mail : louys@dpir.com

## ՝ ձԻՅ Կ1Յ Իձձձձձձ

- Եղերական խոհեր.....2
- Լուրեր.....3-7
- Հարցազրույց.....8-11
- Ասուլիս.....12
- Ցեղասպանութիւն.....13
- Հայկական էսթիզներ.....14
- Տխրուճի.....15
- Հայկական հարց.....16
- Հանդիպում.....17-20
- Ստացւած գրութիւն.....20
- Հայ մայրը.....21
- Ոսկէ օղակներ.....21
- Առողջապահական.....22-23

## äՅ ճԵԻձճձ ԿՅ Ըձձ

فهرست بخش فارسی

Ցեղասպանութեան պատասխանատուները	مسئولان قتل عام ۱
Ամփոփ լուրեր	مرور اخبار ۲
Նոր գրքեր	معرفی چند کتاب ۲
Մաթեմատիկայի պատմութեան համագումար Հայկական	همایش تاریخ ریاضیات ۳ قتل عام ارمنیان بر اساس اسناد محاکمات
ցեղասպանութիւնն ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի Հարցազրույց	ترکهای جوان ۴-۶ دیدار با ناشر ترک ۷
թուրք հրատարակչի հետ Վիրջինիան	ويرجينيا و نژادکشی ارمنیان ۸
Եւ հայերի ցեղասպանութեան Գրականութիւն	ادبیات ۹

## ՁԸ ՌՅ ՍՅ ճձձձ ԿՅ Ըձձ ԿՅ Իձձձձձձ

Թամար Փանոսեան, Աննա Սարգսեան, Բ. Հիւլէ,  
 Ռ. Սարգարեան, Ռ. Կորիւն, Լևոն Ահարոնեան,  
 Ռ. Վարդուհեան, Վ. Վարդանեան, Ա. Խեչումեան,  
 Կ. Սարգսեան, Ժորժ Ահարոնեան, Ռ. Ղազարեան,  
 Շ. Յարութիւնեան, Արմենուհի Սիմանեան,  
 Ա. Վարդումեան, Ս. Խեչումեան, Ա. Սիմանեան,  
 Վ. Կարապետեան, Գ. Աբգարեան, Ս. Բաղերի,  
 Վ. Պետրոսեան, Ռ. Վելիջանեան, Դ. Սիմասեան,  
 Էդ. Գերմանիկ


Հայ ժողովրդի ցեղասպանության դեմ հանդես են եկել աշխարհահռչակ մտաորակացներ և հասարակական-քաղաքական գործիչներ, որոնցից կարելի է յիշատակել Մաքսիմ Գորկուն, Վալերի Բրիտովին և Իրի Վեսելովսկուն՝ Ռուսաստանում, Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրանսիայում, Ջեյմս Բրայսը՝ Անգլիայում, Ֆրիտոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Կարլ Լիբկնիխտը, Յ.Լեպսիուսը, Ե.Մարկարտը, Ար.Վեգները՝ Գերմանիայում, Ջամալգադին ու Ռայինը՝ Իրանում և առաջադեմ ուրիշ շատ գործիչներ՝ աշխարհի գրեթե բոլոր երկրներում:



Ստորև ներկայացնում ենք դրագներ ռուս մեծանուն գրող Մ.Գորկու ասոյթներից, որոնք անբողջութեամբ մտել են նրա Երկերի ժողովածուի 17-րդ հատորի մեջ:

«...Յիշողության մեջ յառնում են Հայաստանի 19-րդ դարի վերջի-20-րդ դարի սկզբի ողբերգական պատմությունը, Կոստանդնուպոլսի, Սասունի կոտորածները, «մեծ մարդասպանը», «քարեկիրը» Երուսալյի քրիստոնեաների նողկալի անտարբերությունը, որով նրանք վերաբերեցին իրենց «քրիստոնեայ եղբայրների» բնաջնջմանը, միապետական կառավարության կողմից Հայաստանի եկեղեցական կայքի կողոպտման ամենախայտառակ քայլը, վերջին տարիների թուրքական արշավանքների սարսափները. դժար է վերյիշել այդ եռանդուն ժողովրդի ապրած բոլոր ողբերգությունները:

Այդ կարգի փաստերը զարմանալիորեն արագ ու ճարակօրէն են մոռանում պարոնայք «մարդասերները», իդէալիստները, այն «քաղաքակրթության» պաշտպանները, որը հիմնված է ազատության, նախանձի, ստրկության վրայ և ժողովրդական զանգածների լկտի բնաջնջման վրայ: Այդ «քաղաքակրթության»՝ մինչև ականջները արեան ու կեղտի մեջ խրած պաշտպանների կեղծիքն ու երկերեսանիությունը հասնում են ականյատ խելայեղության, այնպիսի ոճրագործության, որի համար արժանի պատիժ չկայ:»\*



\* “Наши достижения” (Մեր ձեռքբերումները), Մոսկուա, 1929, համար 1, էջ 81:

Է՞՞ն՝ Կ՞՞ն՝ Ն՞՞ն՝ Ս՞՞Յ՞՞ն՝ Ս՞՞Յ՞՞ն՝ Ս՞՞Յ՞՞ն

Նոր Ջուղայի գարնանային խաղերը... Արդեն գեղեցիկ սովորութիւն է դարձել ամեն տարի Նորուզի արձակուրդներին Նոր Ջուղայում տեղի ունեցող մարզական գարնանային խաղերը: Այդ խաղերին մասնակցել են նաև որոշ մարզական խմբեր Թեհրանից: Յաջողութիւն ենք մաղթում Նոր Ջուղայի Արարատ ՄՍ Միութեան աշխատողներին նման միջոցառումներ կազմակերպելու համար:

Հայ ճարտարապետները տօնեցին իրենց Միութեան 14-ամեակը.- 2000 թ. մարտի 10-ին Հայոց Ակումբում տեղի ունեցաւ «Հայ ճարտարապետների և ճարտարագետների Միութեան» հիմնադրման 14-ամեակին նւիրած հանդիսութիւնը: Բացման խօսքով հանդես եկաւ ՀՃՃՄ-ի նախագահ՝ արմ. Եփրեմ Տէր Անտօնեանը: Հան-



դիսութեան գեղարեստական մասը գեղեցիկ անակնկալներ մատուցեց:

Ն. Թանիրը աջից երրորդը՝ վկայական է ստանում Մշակ. նախարարից

Վերջում, ՀՃՃՄ-ի սովորութեան համաձայն յուշանւէր յանձնեց տյն տարւայ լաւագոյն ճարտարապետ ճանաչած՝ պրն. Նշան Թանիրին, որի կողմից կատարած աշխատանքները ցուցադրել էին հանդիսութիւնը սկսելուց առաջ:

Ողջունելի քայլ դուկտ. Լ. Դաւթեանի կողմից.- Իրանի Իսլամական Հանրապետութեան նորընտիր խորհրդարանի հիւսիսային իրանահայութեան պատգամատը՝ դուկտ. Լ. Դաւթեանը տյն քականի ապրիլի 6-ին իր մօտ է հրատարակել խորհրդարանի ընտրութիւններին մասնակցած թեկնածուներ՝ դուկտ.

Հ.Խաչատրեանին եւ Ռ.Մարգարեանին միասնական համագործակցութեան համար:

### Վարդանանց տօնը Իրան Փիրուզ դպրոցում

21-րդ դար ոտք դրած՝ ազատ Հայաստանով և եռագոյն դրօշով ներկայացող, աշխարհասփիւռ հայ ժողովուրդը, այսօր, աւելի քան երբևէ, հաւատում է Վարդանանց գործի սրբութեանն ու ճշմարտութեանը: Այդ է պատճառը, որ բոլոր հայ օջախները մեծ սիրով և ուրախութեամբ տօնում են այդ սուրբ օրը: Ահա այդ օջախներից մէկը, Թեհրանի «Իրան Փիրուզ» վերաբացած նախակրթարանը, մարտի 9-ին, իր փոքրիկ սրահում՝ ջերմ ու սրտաբաց մթնոլորտում կրկին արթնացրեց Վարդանանց վսեմ ոգին՝ ներկայների հոգում:

Հոգաբարձու կազմի ջանքերով նախաձեռնւած ծրագիրը, որը բաղկացած էր օրւայ թեմայով դասախօսութիւնից, ապա երգ ու պարից և ասմունքից, հաճելի հայկական ջերմ մթնոլորտ էր ստեղծել դահլիճում, որը և ապացոյցն էր հանդիսանում Պ.Սեւակի այն խօսքերի, ուր ասում է, թէ՛ «Մենք քիչ ենք, այո, բայց կոչւում ենք հայ...»:

Թղթակից՝ Գայեանէ Արզարեան

### Րաֆֆի ՄՍ Միութեան Սկաուտական բաժնի 13-րդ բանակումը

Րաֆֆի ՄՍ Միութեան կողմից կազմակերպւած սկաուտական 13-րդ բանակումը տեղի ունեցաւ մարտի 25-ից 28-ը: Մասնակցեցին միութեան սկաուտական բաժնի 50-ից աւելի արի-արեւմուտներ ու երէցներ: Բանակման ընդհանուր պատասխանատուն էր սկաուտապետ՝ Ազատ Յակոբեանը, միւս պատասխանատուներն էին Տիկ. Աստղիկ Հայրապետեանը, Մեղա Խաչիկեանը, Հիլդա Դաւթեանը, Վարդ Արբախանեանը և Րաֆֆի Օրոջեանը: Այդ բանակման էր մասնակցում նաև բաժնի ծնողական խորհուրդը, որն իր օժանդակութիւնը ցուցաբերեց: Այդ կազմում ընդգրկել

էին հետևեալ ծնողները՝ Տիկ. Սիլւա Թահնագեանը, Իշխանուհի Շաքուրեանը, Մարթա Խուրավերդեանը, Այիդա Բարբախանեանը, Մաղէն Մինանեանը, Կարինէ Խոսրովեանը, Ալիս Շահբագեանը, Մարգարիտ Դիլանչեանը և Կարինէ Նաւասարդեանը:

### Սկաուտական երդման արարողութիւն Րաֆֆի ՄՍ Միութիւնում

Րաֆֆի ՄՍ Միութեան սկաուտական բաժնի ինքնադրուել է 1994 թականի փետրուար ամսին: Բաժնի թաղկացած է երեք հատւածներից, աշխատանքները ընթանում են ընդհանուր դաստիարակչական և հայ մշակոյթի զարգացման ուղով:



2000 թի մարտի 3-ի երեկոյեան միութեան կենտրոնա-տեղիում, տեղի ունեցաւ բաժնի 4-րդ երդման արարողութիւնը, որի բացումը կատարեց բաժնի ընդհանուր պատասխանատու՝ պրն. Ժիրայր Մովսիսեանը: Ու քարի գալուստ մաղթելուց յետոյ, զեկուցեց բաժնի անցեալ երկամեայ ծրագրերից: Վարդան Չօրավարի յիշատակին արտասանեցին ճառեր: Տէր Կոմիտասի օրհնութեամբ, բաժնի հատւածները հերթականութեամբ երդեցին, որից յետոյ տեղի ունեցաւ թաշկինակների բաշխում՝ Կորինների, Արծիկների, Արիների, Արեւուշների ու Երէցների միջև: Թաշկինակների բաշխումը կատարեց հետևեալ ազգային գործիչների միջոցով՝ միութեան նախագահ՝ պրն. Պետրոս Արզարեան, Վարդան Բաղդուսեան, Վարդան Բարբախանեան և Մովսէս Քեշիշեան: Ծրագրի վերջում զովասանագրերի արժանացան որոշ անհատներ՝ ստանալով աստիճաններ եւ ճշաններ:

Թղթակից՝ Վերդինէ Պետրոսեան

## Ի՞նչ է կատարուում Եշմաթիտ քաղամասում

Տեղեկացանք, որ Թեհրանի Հեշմաթիտ քաղամասում որոշ խնդիրներ են առաջացել կապում՝ Ս.Վարդանանց եկեղեցու քահանայի հետ: Իսկ բանն ինչո՞ւմն է...

Ըստ երեւոյթին, քաղի քահանայ Տէր Մուշեղ Աւետեանին մի ամսով զրկել են իր հոգևոր ծառայութիւնից, իսկ նրան ժամանակաւորապէս փոխարինում է Տէր Միրան քահանայ Հայրապետեանը:

Հարցի բուն էութիւնը պարզելու եւ գերաշնորհ Սրբազան Տէր Մեայուհ Մարգարեանի կարգադրութիւնը լսելու համար դիմեցինք Ազգային Առաջնորդարան, սակայն, ցուօք սրտի, մեզ յայտնեցին, թէ Սրբազան Հայրը Թեհրանում չէ: Ուստի մենք դիմեցինք եկեղեցում եղած պատասխանատուներին, ապա նաեւ այնտեղ հաւաքած քաղի ժողովրդին, որը եկել էր բողոքելու համար: Մենք ստացանք հետեւեալ պատասխանները.

Տէր Միրան.- Ես ասելիք չունեմ, իրատւնք էլ չունեմ, հրաժարում եմ պատասխանելուց:

Մարգիս Պետրոսեան (եկեղեցու խորհրդի անդամ).- Ես չեմ ցանկանում խօսել:

Հրաչ Մարուխանեան (եկեղեցու գրասենեակի պատասխանատու).- Հիմա ի՞նչ էք ուզում ինձանից, ես ոչ մի բացատրութիւն չունեմ տալու: Մինչեւ մէկը չսխալի, նրան չեն պատժի: Ես հիւանդ մարդ եմ, ինձանից ոչինչ մի հարցրէք:

Տիկ. Ռիմա Թորոսեան.- Ժողովուրդը պէտք է համբերի եւ սպասի: Այս հաւաքը որեւէ արդիւնքի չի հասնի: Ես չզհետն Տէր Մուշեղը ինչ սխալ է թոյլ տւել: Մենք Առաջնորդարան ունենք, եւ նրա խնդիրը պէտք է Սրբազան Հայրը պարզի: Ուրեմն սպասենք նրա վերադարձին:

Տիկ. Ռոզա Սաստրեան.- Տէր Մուշեղը ժողովրդական քահանայ է: Ես 43 տարի է արդէն, որ այս քաղում եմ ապրում: Չեր կողմից մատնանշւած քահանան ընդամենը 11 ամիս է, որ ծառայում է մեր քաղի եկեղեցում: Այս կարճ ժամանակահատուածում մեծ բաւարարածութիւն է պարզւել ժողովրդին: Մինչ նրա

զալը, 4-5 հոգի հազիւ էին մտնում եկեղեցի, բայց նրա գալուց յետոյ եկեղեցու ներսում տեղ չկար եւ ժողովրդի մի մասը, նոյնիսկ, դրսում էր կանգնում: Իսկ հիմա նրան մեղադրում են, որ նա խանութպան է, եւ այդ պատճառով նա իրատւնք չունի որպէս քաղի քահանայ եկեղեցուն ծառայել: Ասեմ նաեւ այն, որ նա տները օրհնելու գնալիս ժողովրդից փող չէր վերցնում: Արդե՞օք սա յանցանք է:

Տիկ. Վարդիշաղ Նազարեան.- Մենք պահանջում ենք Տէր Մուշեղի վերադարձը: Եթէ քահանային ուզում են պատժել, պէտք է քաղի ժողովուրդը իրագել լինի: Չեն սպասել գոնէ Չատիկն անցնի: Այս մարդը եթէ ժողովրդից փող չի վերցրել, դրանով չէր կարող մեղք գործել:

Տիկ. Սաթենիկ Նուսարեան.- Նախքան նրան այստեղ քահանայ նշանակելը, գիտէին որ նա իր հոր խանութում աշխատում է: Ի՞նչ է նրա մեղքը: Նա եկեղեցում խօսում է Յիսուս Քրիստոսի դարանանքի մասին: Մի՞թէ նա եկեղեցում «խանութպանութիւն» է անում: Չենք յիշում մի օր, որ նա իր պարտականութիւնների մէջ զլացած լինի: Մենք յարգում ենք Տէր Միրանին, բայց մենք մեր քահանային ենք ուզում: Ասում են Տէր Մուշեղը քահանայի զգեստով խանութում աշխատում է, ինչ անենք, մի՞թէ գողութիւն է անում: Տէր Մուշեղին որպէս պաշտպանողներ, տիկ. Անահիտ Նուսարեանը, պրն. Երամիրզեանը, պրն. Արթին Աւետեանը բարեխօսեցին եւ դրատանքի խօսքեր ասացին նրա մասին:

Ժողովուրդն անհամբեր սպասում է սրբազան հոր վերադարձին եւ վճիռին:


## Ան՞Յ Կ

Իրանը 2001 թականին զբօսաշրջիկութեան օրայ հիւրընկալն է լինելու.- (Մոշարեքաթ օրաթերթ, 29.02.2000): Զբօսաշրջիկութեան համաշխարհային կազմակերպութիւնը 2001 թականը անուանել է քաղաքակրթութիւնների երկխօսութեան տարի, եւ այս առիթով որոշել է, որ Իրանի Իսլամական հանրապետութիւնը համաշխար-

հային զբօսաշրջիկութեան օրայ հիւրընկալը դառնայ: Ըստ այդ կազմակերպութեան, 2001 տարայ զբօսաշրջիկութեան լոգումզը կլինի՝ «Զբօսաշրջիկութեան լոգումզը կլինի՝ խաղաղութեան և քաղաքակրթութիւնների երկխօսութեան համար»: Պարսկական տոմարով դա կը լինի 1380 թականի Մեհր ամսի 5-ին:

Աշխարհի ամենամեծ գորզը գործելց Իրանում.- (Մոշարեքաթ օրաթերթ, 23.02.2000): Իրանի արևելեան շրջանի գորզերի ընկերութեան գործադիր տնօրէն՝ պրն. Հասան Անսարի Նիան յայտնել է, որ այս գորզը 500 մետր է և գործել է Նէշաբուր քաղաքում: Դրա քաշը 25 տոննա է, և գործել է 600 գորզագործների միջոցով՝ երկու տարայ ընթացքում:

Թեհրանի մետրոն սկսեց աշխատել.- 25 տարի սպասելուց յետոյ վերջապէս Թեհրանցիները կօգուեն մետրոյի ծառայութիւններից: Սակայն կայարանների մի մասն է դեռ յանձնւել շահագործման:



Մետրոյի շահագործումը կփրկի Թեհրանի ժողովրդին օրի աղտոտւածութիւնից ու ծանր երթեւեկութիւնից:

Մամուլը ազատութեան սահմանների պահպանման ամենակարևոր հիմքն է.- (Մոթիէ Էմրուզ օրաթերթ, 24.02.2000): Իրանի խլամական մշակոյթի եւ առաջնորութեան նախարար դոկտ. Աթա Օլլահ Մոհաջեբանիի վերոյիշեալ մտքերն արտասանեցին Իրանի յայտնի բանաստեղծ «Ֆարուդի Եագդիի» մեծարման համագումանում: Նա նշել է, որ խօսքի ուժը ամենահզօրն է, և ոչ մի ուժ, նոյնիսկ զէնք ու հարստութիւն, չեն հասնի այդ ուժին:

15 տոկոսով անվանում են Թեհրանի ջրերը. - (Մոքիտ Էմրուզ օրաթերթ, 4.03.2000) տասնհինգ հոր իր յարմարություններով, պատրաստել են եւ կնպաստեն, որ յաջորդ տարի 15 տոկոսով ջրի մատակարարումը անվանայ Թեհրանում:

Նորուզի ընթացքում 1.5 միլիոն զբօսաշրջիկ է ունեցել Իրանը.- (Մոշարեքս օրաթերթ, 21.03.2000): Իրանի զբօսաշրջիկության կազմակերպության պատասխանատուներից՝ պրն. Ռաջաբալի Խոսրօ-արադին յայտնել է, որ 1.5 միլիոն արտասահմանցի այցելեցին Իրան նորուզի արձակուրդների ընթացքում: Համեմատ անցեալ տարւայ հետ, 30 տոկոս աճ է նկատուել:

1046 մարդ է մահացել բահման ամսւայ ընթացքում ատօվթարի հետևանքով.- (Մոշարեքս օրաթերթ, 21.03.2000) Դատաբժշկական կազմակերպության հանրային կապն է յայտնել վերոյիշեալ լուրը: Բահման ամսւայ ընթացքում այս կազմակերպիւնը դիտարկեման է ենթարկել 4037 դիակ, որոնցից մի մասը խեղդամահ են եղել եւ այլուել, իսկ միւս մասը թմրադեղերի օգտագործման և բնական մահւան գոհ են դարձել:

Իրանացին բժիշկների միջազգային կոնգրեսում զբաղեցրեց երկրորդ տեղը.- (Ասր Ազադեզան օրաթերթ, 5.03.2000) Սա տեղի ունեցաւ Ճապոնիայում: Պրն. Մորթեզա Ռաֆիին, որը հետազօտութիւններ էր կատարել «Իսֆահանում աղի ուսումնասիրութիւն» թեմայով երկրորդ տեղը գրաւեց:

Իրանում հիմնադրելու է սպիտակ հիւանդների պաշտպանութեան միութիւն.- (Ասր Ազադեզան օրաթերթ, 5.03.2000) :Այս լուրը հաղորդել է Իրանի հեմոֆիլիայի կենտրոնի նախագահ՝ պրն. Դաւիդէլը:

Ժամանակն է վերացնել բոլոր խտրակամութիւնները կանանց նկատմամբ.- (Մոշարեքս օրաթերթ, 7.03.2000) :Այս մասին է խօսել Ամիր Քարիր համալսարանում կազմա-

կերպած «Իրանացի կնոջ իրաւական պահանջները» թեմայով դասախօսութեան ընթացքում:

Իրանում շահագործման յանձնեց Միջին Ասիայի ամենախոշոր ջրամատակարարման ծրագիրը.- (Մոքիտ Էմրուզ օրաթերթ, 6.03.2000): Իրանի նախագահ պրն. Մոհամադ Խաթամին դրա բացումը կատարեց Իրանի Եազդ քաղաքում: Այդ խողովակաշարի երկարութիւնը 333 կիլոմետր է, որը Ջայանդեռու գետի ջուրը հասցնելու է Եազդ քաղաք:

### Դատապարտում ենք

Սոշարեքս կուսակցութեան տեսաբան և Մոքիտ Էմրուզ օրաթերթի արտօնատիրոջ ահաբեկումը՝ խիստ դատապարտելի է: Իրանում կատարելիք բարեփոխումների շարժումը երբեք մման ահաբեկումներով կանգ չի առնի, այլ ընդհակառակը անելի մեծ թափ պէտք է ստանայ: Ինչ խօսք, ահաբեկչութիւնը ինչ նպատակով էլ որ կատարւած լինի, դատապարտելի է: Մաղթենք առողջութիւն եւ յուսանք նրա շուտափոյթ ապաքինութեանը:



### ՃՅ ԽՅ Է՞ 3 Կ

Հոկտեմբերի 27-ի պատիրատուն խորհրդարանից դուրս մի ուժ է եղել.- (Ազգ. Հեռ. 12.03.2000)

Գազիկ Ջահանգիրեանը ասաց, որ իրենք այդքան էլ միամիտ չեն, որպէսզի ոճրագործների դատապաշտպաններին յայտնեն դրանց անունները: Նայիրի Յունանեանի խմբին պատուիրատու ուժի նպատակը



իշխանութեան տապալումը և դրա գրաւումն է եղել:

Ռոբերտ Քոչարեանը ընդունեց հոկտ. 27-ի դէպքերի առընչութեամբ մեղադրող Մուշեղ Մովսիսեանի մօրն ու եղբայրներին . - (Ազատ. Ռ.Կ., 11.03.2000)



Մուշեղ Մովսիսեանի մի խումբ համագիւղա-ցիներ բողոքի ցոյց էին կազմակերպել նախագահի նստավայրի առջև՝ պահանջելով ընդունելութիւն: Մէկ օր անց նախագահը ընդունեց նրա մօրն ու եղբայրներին:

Վստահութեան մթնոլորտի ձևաւորման համար կարևոր է հոկտեմբերի 27-ի ոճրագործութեան բացայայտումը.- (Ազատ. Ռ.Կ., 11.03.2000) Այսպէս է արտայայտուել Ստեփան Դեմիրճեանը, շարունակելով, որ պէտք է ժողովրդին, երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար ելքեր և ուղիներ գտնել:

ՀՀ նախագահն էլ չի կարող ինձ հեռացնել.- (Առաւօտ օրաթերթ, 10.03.2000) Այս թերթի թղթակցի հարցին ազգային հեռուստատեսութեան գործադիր տնօրէն՝ Տիգրան Նաղդալեանը այսպէս է պատասխանել, որ սեփական կամքով հրաժարական տալու մտադրութիւն չունի, եւ իրեն էլ պաշտօնանկ անելու իրաւատութիւն չունի Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոբերտ Քոչարեանը : Այդ լիազօրութիւնը վերապահում է ազգային հեռուստատեսութեան պետական փակ բաժնետիրական ընկերութեան ժողովին:

Հայոց Աշխարհ թերթը՝ ընդդէմ Միասնութեան Դաշինքի.- (Ազգ. Ռադ., 11.03.2000) Այդ թերթում քննադատական յօդածներ են հրատարակել կառավարութեան երեք անդամների՝ Վահան Շիրխանեանի, Վաղարշակ Յարութիւնեանի և Սմբատ Այսազեանի դէմ: Թերթը ամբիոն է տրամադրում այն մտաւորականներին , ովքեր քննադատում են Միասնութեան Դաշինքը: (Նոյն մօտեցումն է ցուցաբերել նաև ազգա-

յին հեռուստատեսութիւնը Տիգրան Նաղդալեանի ղեկավարութեամբ):

Հայաստանի բնակչութեան 3 տոկոսը ազգային փոքրամասնութիւններն են.- (Ազգ. Հեռ., 12.03.2000) Հայաստանի ազգային փոքրամասնութիւնները գտնում են, որ պէտք է ստեղծի իրենց իրաւունքների պաշտպանութեան պետական մարմին, այս հարցը արծարծեց մարտի 12-ին Երևանում գումարած ազգային փոքրամասնութիւնների համագումարում, որը նախաձեռնել էր ՀՀ նախագահի խորհրդական Ռազմիկ Դատլեանը: ՀՀ-ում ազգային փոքրամասնութիւնները կազմում են բնակչութեան մօտ 3 տոկոսը: Արդէն վաղուց է, որ աշխատում է Ազգութիւնների Միութիւնը, որի ղեկավարն է Վլադիմիր Չատակը, նրանց խնդիրներից մէկն այն է, որ մի պատգամատուր ունենան ազգային ժողովում: Ազգութիւնների Միութիւնը բաղկացած է 12 կազմակերպութիւններից:

Արդէն վերականգնել է Նայիրի-տը.- (Ազգ.հեռ., 27.03.2000) Ընտանի գործարարը կտայ իր առաջին արտադրանքը: Ըստ վարչապետ Արամ Սարգսեանի, նրան տեղեկացրել են, որ հնարատու է ամսական 700-800 տոննա արտադրանք արտահանել Ռուսաստան եւ Ուկրաինա, նշելով, որ այդ մասին կայ արդէն պայմանաւորաձութիւն: Պրն. Սարգսեանը նշեց նաեւ, որ այդ արտադրանքը մեծ նշանակութիւն ունի համրապետութեան համար եւ դրանով երկիրը պարտատուրած չի լինի քիմիական ներմուծումներ կատարելու: Նա նշել է նաեւ, որ այդ գործարանում ստացւում է քլոր, որը աշխարհի ոչ մի գործարանում չեն կարողանում ստանալ:

Արցախեան պատերազմում անյայտ կորածների որոնումը.- (Յառաջ օրաթերթ, 15.03.2000) ԼՂՀ անյայտ կորած զինուորների եւ քաղաքացիների հարցերի յանձնաժողովը որոշել է ԼՂՀ կառավարութեանը դիմել՝ որոնման յատուկ խումբ ստեղծելու առաջարկով: Այդ խմբի առաքելութիւնը կլինի՝ պատերազմի տարիներին կատարած ան-

յայտ թաղումների վայրերը յայտնաբերելը եւ գտնած աճիւնները դատարժշկական փորձաքննութեան ենթարկելը:

Դատապարտում ենք

Մարտի 22-ին Լեւոնային Ղարաբաղի նախագահի դէմ կազմակերպած ահաբեկումը խիստ դատապարտում ենք ու հուսատացած ենք, որ նման անմարդկային արարքները չեն կարող որևէ բացասական ազդեցութիւն բողոնէ հայ ժողովրդի կամքի վրայ: Պէտք է իրաւապահ և ներքին գործերի նախարարութեան աշխատակիցները ջանք չխնայեն շուտ յայտնաբերելու համար ահաբեկողներին ու ամենաձանր միջոցներով պատժի ենթարկեն նրանց, այնպէս, որ այլևս մէկը չհամարձակի որևէ հայ պաշտօնեայի դէմ զէնք բանեցնել: Պէտք է վերջ դրեն նման արարքների, եւ պէտք է արմատախիլ լինեն նման երեւոյթները:



Վանօ Միրաղեանը ենթարկեց կալանքի.- (Ազգ.հեռ., 05.04.2000) Մարտի 4-ին Հայաստանի Գերագոյն դատարանը Վանօ Միրաղեանին կալանքի ենթարկելու որոշում կայացրեց: Իսկ Ազգային Ժողովը քննարկելով այդ հարցը, չեղեալ համարեց նրա անձեռնմխելիութիւնը որպէս պատգամատուր: Վանօ Միրաղեանը մեղադրում է կազմակերպած սպանութիւնների ու սահափործների պատճառով:



Յանուն արտագաղթելու սիրոյ.- (Յառաջ օրաթերթ, 14.03.2000) Վերջին շրջանի հզօրացած արտագաղթի թափը, առիթ շահագործողների յայտնելու պատճառ դարձաւ: Վերջերս ձերբակալու են մի խումբ մարդիկ, որ արտագաղթողներին օժանդակելու խոստումներով մեծ գումարներ են կորզել նրանցից: Խումբը ղեկավարում էին Ազատ

Մանուկեանը եւ Քնարիկ Սմբատեանը, որոնք իբրեւ թէ զբաղւում էին ԱՄՆ-ի մէջ բարեսիրական համերգների կազմակերպմամբ: Այդ առումով կատարած խաբերայութեանը նրանք 47 հոգուց մօտ 250.000 դոլար կորզել են եւ գումարի մի մասը փոխադրել ԱՄՆ:

ԹՇԿՅ 3 1/2 3 ԱՅԿ

Շեղիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց Յեղասպանութիւնը.- Շեղիայի խորհրդարանը ստյն քալանի մարտի 29-ին ընդունեց մի բանաձեւ, որով ճանաչեց Հայոց Յեղասպանութիւնը: Տեալ բանաձեւում նշւած է նաեւ, որ Թուրքիայի կողմից Յեղասպանութեան ճանաչումը կնպաստի Կովկասի կայունացման ստեղծմանը, եւ Թուրքիայում ժողովրդավարութեան զօրացմանը: Խորհրդարանը միաժամանակ կոչ արեց Հոլանդիայի Աստէն քաղաքի քաղպետարանին, հետեւել Շեղիայի օրինակին եւ նեցուկ կանգնել Յեղասպանութեան յուշակոթողի կառուցմանը:



Յեղասպանութեան ոգեկոչման օր Վիրջինիայի նահանգում.- (Յառաջ օրաթերթ, 15.03.2000) ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի ընդհանուր խորհուրդը մարտի 13-ի նիստում ընդունել է մի բանաձեւ, որով ապրիլի 24-ը կդառնայ «Հայերի ցեղասպանութեան ոգեկոչման Վիրջինիայի օրը»: Խորհուրդը, նոյն նիստում դատապարտել է ամբողջ մարդկութեան դէմ գործած այդ դաժան ոճրագործութիւնը, որն ուրանալու համար Թուրքիան մեծ արշաւ է կազմակերպել:

Փարիզի միասնական հանրահալաքին մօտ 15.000 մարդ մասնակցեց.- (Յառաջ օրաթերթ, 14.03.2000) Յեղասպանութեան ճանաչման թեման օրակարգ դարձնելու՝

Ծերակոյտի նախագահների ժողովի վերջին ներժմանը որպես հակազդեցութիւն, ապրիլի 24-ի Կոմիտէի եւ Հայ Դատի յանձնախմբի կողմից կազմակերպուած միասնական համարահաւաքը տեղի ունեցաւ մարտի 11-ին, շարք օրը երեկոյեան Ծերակոյտի շէնքի դիմաց:

**Ռ**ուսաստանի կարծիքով զարգացած աշխարհը չի ընդունում Ամերիկայի կիսակայսերական քաղաքականութիւնը.- (Մոքիէ Էմրուզ օրաթերթ 26.02.2000) ԱՄՆ-ի սենատում ընդունել է մի որոշում, ըստ որի պատիժներ են նախատեսուել Ռուսաստանի և միւս երկրների համար, որոնք իբրև թէ օգնում են Իրանին զենք ձեռք բերելու գործում: Չնայած, որ Իրանը բազմիցս յայտարարել է, թէ որևէ մտայնութիւն չունի նման զենքեր ձեռք բերելու համար: Ռուսաստանի արտգործնախարարութիւնը մի յայտարարութեամբ դատապարտել է ԱՄՆ-ի այդ որոշումը և յայտնել, որ նման մի օրէնքների հաստատումը արտացոլում է ԱՄՆ-ի կիսակայսերական դրսևտրումները, որոնք մենք և քաղաքակիրթ աշխարհը չի ընդունում:

**Վ**րաստանը երաշխաւորեց Բաքու-Թիֆլիս-Չէշիան նաւթուղու ապահովութիւնը.- (Մոքիէ Էմրուզ օրաթերթ, 4.03.2000): Երեք նստաշրջաններից յետոյ Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան համաձայնութեան են եկել այդ խողովակաշարի կառուցման և նրա ապահովութեան հարցերի շուրջ:

**Ռ**ուսաստանը և Հնդկաստանը միասնական ստրատեգիական պայմանագիր են ստորագրում.- (Մոքիէ Էմրուզ օրաթերթ 4.03.2000): Հնդկաստանի արտաքին գործոց նախարարը յայտնեց, որ մինչեւ այս տարւայ վերջ, երկու երկրները քաղաքական ու ռազմական պայմանագրեր կստորագրեն իրենց յարաբերութիւններն աւելի սերտացնելու նպատակով:


**Տ**արին 78 միլիոն մարդ է աւելանում աշխարհի բնակչութեան ընդհանուր թիւն.- (Սար Ազադեզան օրաթերթ 20.10.99): Տարեկան ծնում են 130 միլիոն նորածին և

մահանում ` 52 միլիոն մարդ: Այսպիսով, տարեկան 78 միլիոն մարդ աւելանում է աշխարհի բնակչութեան ընդհանուր թիւն: Մարդու միջին կեանքի տևողութիւնը 46 տարեկանից հասել է 66 տարեկանի, սա աւելի շատ նկատում է հարուստ երկրներում:

**Մ**եծ տեղութիւնները Ռուսաստանի հետ պէտք է հաշի նստեն.- Ռուսաստանում վերջերս տեղի ունեցած նախագահական ընտրութիւններում, ընդհանուր քւէների մօտաւորապէս 53 տոկոսը շահած Վլադիմիր Պուտինը ընտրուեց երկրի նախագահ: Այդ առիթով նրան շնորհատրական ուղերձներ յղեցին Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ պրն. Մոհամադ Խաթամին, Հայաստանի Հանրապետութեան նախագահ պրն. Ռոբերտ Քոչարեանը, եւ մի շարք այլ երկրների նախագահներ: Ընտրուելուց յետոյ Վ. Պուտինը իր պատրաստակամութիւնը յայտնեց համագործակցել երկրում գոյութիւն ունեցող բոլոր քաղաքական ուժերի հետ՝ Ռուսաստանում ներքին կայունութիւնը ապահովելու, եւ այն դէպի հզօրացման տանելու նպատակով: Նա խոստացաւ, որ թոյլ չի տայ առանց իր իմացութեան ՆԱՏՕ-ի ազդեցութեան ընդլայնումը: Նա բացառեց նաեւ առանց Ռուսաստանի հետ հաշի նստելու եւրոպական անվտանգութեան հարցերի եւ նմանատիպ որևէ խնդիրների արծարծումը: Ռուսաստանի նորընտիր նախագահը կառավարութեան կազմի մասին խօսելուց, յայտնեց, որ մտադիր է 68 նախարարների թիւը կրճատել՝ հասցնելով 30-ի:



**CIA**  
-ն յանձն է առել Շեւարդնաձէյի անվտանգութի



ւնը.- (Մոքիէ Էմ-րուզ օրաթերթ, 9.03.2000) Վր-րաստանի նախագահը յայտնել է, որ երկու անգամ ահաբեկման ենթարկուելուց յետոյ ԱՄՆ-ի CIA-ն սկսել է պաշտպանել իրեն: Նա աւել է նաեւ, որ այս հարցը զաղտնիք չէ, թէ CIA-ն մեզ օգնում է:

**CIA**-ն և Մուսադը մտադիր են արել Իրանի և Թուրքիայի յարաբերութիւնները.- (Մոշարեքաթ օրաթերթ 19.02.2000) Թուրքիայի «Ենի Շաֆադ» օրաթերթը գրում է, որ CIA և Մուսադ գաղտնի կազմակերպութիւնները աշխատում են սրել Իրանի և Թուրքիայի յարաբերութիւնները: Նրանք, տարբեր կասկածելի լուրեր տարածելով, կասկածներ են առաջ բերում երկու երկրների միջև:

**Չ**ինաստանը զգուշացրեց ԱՄՆ-ին, որ վերջինս չմիջամտի իր ներքին գործերին.- (Մոշարեքաթ օրաթերթ, 15.03.2000): Չինաստանի արտգործնախարարը պահանջել է ԱՄՆ-ից, որ խուսափի այդ երկրի ներքին գործերին միջամտելուց: Այդ հարցը, մասնատրապէս, վերաբերում է Տիբետի շրջանին:

**15** տարի կը պահանջուի աշխարհում սովեակների քանակը նազեցնելու համար.- (Համշարհի օրաթերթ, 19.03.2000): Սա մի հետազօտութեան արդիւնք է: Չարգացող երկրներում շուրջ 200 միլիոն երեխայ տառապում է թերսնամոթիւնից:


شرکت تصویر پردازان ايران

(CD )

tasvir@hotmail.com

**Շարքագրոյց Իրանի 6-րդ շրջանի  
խորհրդարանի հիւսիսային  
իրանահայութեան նորընտիր  
պատգամաւոր**

**Դոկտ.  
Լեւոն  
Դաւթեանի  
հետ**



**Լոյս.** Նախ թոյլ տւէք Լոյս երկշաբաթաթերթի կողմից շնորհատրել Ձեզ՝ պատգամաւոր ընտրելու կապակցութեամբ և շնորհակալութիւն յայտնել, որ ընդունեցիք մեր հրատիր ու Ձեր ժամանակը տրամադրեցիք մեզ այս հարցագրոյցի համար: Թոյլ տւէք անցնենք հարցերին:

**Շարք.** Ինչպէ՞ս էք գնահատում Իրանի Իսլամական 6-րդ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքները:

**Պատ.** Իրանի Իսլամական Հանրապետութեան 6-րդ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքները բաւականին նոր յոյս են մերշնչում մարդուն, եւ ես հաւատացած եմ, որ մեծ փոփոխութիւններ կլինեն առաջիկայ չորս տարայ ընթացքում: Որոշ չափով փոփոխութիւն է կրել նախկին ուժերի համեմատական ներկայութիւնը, բայց ընդհանուր առմամբ ես բաւականին դրական եմ գնահատում եւ լաւատես եմ այս խորհրդարանի գործունէութեան վերաբերեալ:

**Շարք.** Արդեօ՞ք ընդունում էք նոր խորհրդարանի քաղաքական ուժերի բաժանումը՝ վերափոխականների ու պահպանողականների: Ինչպէ՞ս էք գնահատում դրանց, եւ ո՞ր ուժերն էք Ձեզ աւելի մօտ զգում եւ ցանկանում աւելի շատ համագործակցել նրանց հետ:

**Պատ.** Բնականաբար երկու թերի մէջ գոյութիւն ունի տարբերութիւններ, իրաքանչիւրը երկրի առաջադիմութիւնը եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան զարգացումն ու ամրապնդումը իրովի է ընկալում, չնայած կարելի է ասել, որ հինգերորդ խորհրդարանը պահպանողականների ազդեցութեան տակ էր, իսկ նոր ընտրութիւնների բերումով թում է, թէ վերափոխականները պիտի աւելի ազդեցիկ ուժ ունենան: Երկու թերի քաղաքական վեճերին ու քաշքշուկներին, ես հաւատացած եմ, որ պէտք չէ մասնակցել: Մենք պէտք է մեցուկ կանգնենք խորհրդարանում արծարծած առաջարկներին, որոնք Իրանի վերելքի եւ յաջողութեան համար դրական կլինեն:

**Շարք.** Նախկինում Ձեր ժամերի մեծ մասը տրամադրում էիք հիւանդներին, պատրաստ էք այսուհետեւ աւելի շատ զբաղուել քաղաքականութեամբ՝ որպէս պատգամաւոր, Չեր խորհրդարանական աշխատանքներով:

**Պատ.** Սա մի գործ է, որ ես շատ տարիներ եմ կատարել, շուրջ 10 տարի անդամակցել եմ Թեմական Խորհրդին, միշտ գործիս ժամերը զիջել եմ ի շահ ազգային աշխատանքների եւ նոյնը պիտի անեմ այսուհետեւ: Կարծում եմ, որ 30-40 տոկոս կըճատելով իմ աշխատանքային ժամերը, կկարողանամ երկու պարտա-

կանութիւններն էլ կատարել: Եւ հարկ եմ համարում ներողութիւն խնդրել իմ պարսիկ և հայ հիւանդներից, որովհետեւ այս պատասխանատուութիւնների բերումով յաճախ նախապէս ճշտած ժամերը խախտում եմ, եւ հիւանդները գալիս ու ապարդիւն վերադառնում եմ:

**Շարք.** Որոշները այն կարծիքին են, որ մեր Առաջնորդարանը, Պատգամաւորական Ժողովը, Թեմական Խորհուրդը եւ այդ շարքում նաեւ Դուք, անցեալում, աւելի մօտ էք եղել պահպանողական ուժերին եւ պաշտպանել էք նրանց քաղաքականութիւնը: Իսկ իշխանութեան մէջ ուժերի յարաբերութիւնը փոխելով աստիճանաբար փոխում է նաեւ Ձեր քաղաքականութիւնը, եւ այն տպաւորութիւնն է ստեղծում, որ պէտք է միշտ կողմ լինել մեծամասնութեան քաղաքականութեանը, անկախ նրա ճիշտ կամ սխալ լինելուց: Ի՞նչ կասէիք այդ կապակցութեամբ:

**Պատ.** Ընդհանրապէս տրւած հարցի հետ ես շատ համաձայն չեմ, որովհետեւ Առաջնորդարանը, Պատգամաւորական Ժողովը, Թեմական Խորհուրդը եւ նրան անդամակցող անհատները երբեք քաղաքական դիրքորոշում չեն ունեցել Իսլամական Հանրապետութիւնում եւ պատճառն էլ շատ պարզ է, որ մեր համայնքում արծարծած, յուզող խնդիրները կախուած չեն երկրում տիրող ընդհանուր քաղաքական իրավիճակից եւ նաեւ թերեւից, օրինակի համար, մեր դպրոցների եւ մեր «Անուշ Ծախախ»-ի խնդիրները, դրանք ընդհանրապէս բխում են հիմնական օրէնքից եւ Իսլամի սկզբունքներից: Եթէ հետեւեալ ակնոցով նայենք, թէ մեր ազգային դրւածքը քաղաքական դիրքորոշում է ունեցել, ես դա սխալ եմ համարում: Բնականաբար մեր պատգամաւորի դիրքորոշումը այս ուժերի նկատմամբ հետեւեալն է՝ բոլոր այն առաջարկները, որոնք Իրանի Իսլամական Հանրապետութեան ներքին և արտաքին շահերի և առաջադիմութեանը օժանդակող դեր են կատարում, նրանց պէտք է մեցուկ կանգնել, բայց թէ արդեօ՞ք մեր ազգային դրւածքը միշտ մեծամասնութեան հետ է եղել, անկախ նրա ճիշտ կամ սխալ լինելուց, իսկապէս դա սխալ եմ գտնում եւ չեմ բաժանում այս կարծիքը:

**Շարք.** Եթէ բոլոր իրանահայ հատուածները պաշտպանեն և թիկունք կանգնեն Ձեզ, Դուք արդէն մեծ յաջողութեամբ կարող էք Ձեր ծրագրերն իրականացնել, արդեօ՞ք ծրագրեր կան մտայնացումներ ունէք իրանահայ տարբեր հատուածներին իրար մօտեցնելու եւ օգտագործելու համար նրանց բոլոր պոտենցիալ ուժերը: Եթէ այո, որո՞նք են այդ ծրագրերը:

**Պատ.** Բնականաբար ամէն մի թեկնածու քլէների մեծ տոկոսն ունենալով, յատկապէս մեր պարագայում, որ փոքրամասնութիւն ենք, աւելի ուժեղ դիրքերով պէտք է մերս մտնի խորհրդարան: Ինչ վերաբերում է զանազան ուժերից օգտւելուն, ապա դա բնական է: Նախկին թեմական խորհուրդները եւ, մասնաւորապէս իմ նախագահութեան ժամանակաշրջանի Թեմական Խորհուրդը, այդ բանը մասույի միջոցով իրականացրեց՝ դիմելով ժողովրդին: Ես իմ ընտրատարածքում ունեցած գրասենեակների միջոցով, տարբեր թաղեր եւ շրջաններ այցելելու բերումով, անպայմանօրէն կապ կհաստատեմ մեր տարբեր խաւերի հետ եւ կողջունեմ նրանց



ժանդակութիւնը իմ նպատակներին հասնելու համար, հաւանաբար մամուլի միջոցով կդիմեն մեր ժողովրդին եւ արդէն մնում է անհատներին՝ նրանց, ովքեր մտածում են, թէ կարող են օգտակար լինել ինձ: Իմ գրասենեակների դռները բաց կլինեն իրենց առջեւ:

**Կարց.-** Խորհրդարանի միւս կրօնական փոքրամասնութիւնների պատգամատրոնների հետ ինչպիսի՞ համագործակցութիւններ էք նախատեսում:

**Պատ.-** Միւս կրօնական փոքրամասնութիւնների պատգամատրոնների հետ համագործակցութիւնը շատ կարեւոր են համարում, մասնաւորապէս այն պատճառով, որ ինչքանով տեղեակ են, այս տարի բոլոր փոքրամասնութիւնների պատգամատրոնները նոր ընտրւած անհատներ են. թէ՛ միմեանց հետ ծանօթանալը եւ թէ՛, ընդհանուր առմամբ, փոքրամասնութիւնների իրատեսութիւնների պաշտպանութիւնը, իմ ծրագրի մի մասն են կազմում:


**Կարց.-** Արդէն տեղեկութիւն կայ, որ Պատգամատրական Ժողովի ծրագիր-կանոնագիրը՝ իր ընդհանրութեան մէջ, հաստատել է: Ե՞րբ տեղի կունենան Պատգամատրական Ժողովի ընտրութիւնները: Ձեր կարծիքով, ինչ Պատգամատրական Ժողով էլ, որ ընտրուի լա՞ւ է համայնքի համար: Ի՞նչ խորհուրդ կտայիք մեր իրանահայերին այդ կապակցութեամբ:

**Պատ.-** Արդէն մեր համայնքի հայրենակիցները, կարծում են, որ թէ՛ Ալիք օրաթերթի միջոցով, եւ թէ՛ պաշտօնապէս պարսկերէն թերթերի միջոցով տեղեկացել են, որ մեր թեմի կանոնադրութիւնը, իր ընդհանրական գծերով, հաստատել է 10-րդ կէտի կամիցիայի (կոմիսիոն մադէ 10) միջոցով: Որոշ խնդիրներ կան եւ պէտք է այդ ուղղութեամբ աշխատանք տարուի: Ընկալելի ձեւն այն է, որ պետական որեւիցէ խոչընդոտ չունենալու դէպքում, ընտրուում է ընտրական մի յանձնախումբ կամ մարմին, որի աշխատանքներից յետոյ են տեղի ունենալու ընտրութիւնները: Կարծում են, դա վեց ամսւայ ընթացքում իրականանայ, բայց դեռ այս առումով յստակ թւական չի ճշտւած: Իմ կարծիքով, այնպէս, ինչպէս իրանահայութիւնն իր մասնակցութիւնը բերեց խորհրդարանի ընտրութիւններում, համոզւած են, որ նոյնքան ակտիւութիւն կցուցաբերի մեր պատգամատրական ժողովի ընտրութիւններում: Ազգային խնդիրներին լուստեղեակ մարդիկ, որոնք նաեւ ունեն լաւ որակեալ կրթութիւն, բժախնդիր են ու շահախնդիր համայնքի հարցերի ու դժարութիւնների նկատմամբ, ազգային հասարակական կեանքում մեծ ներդրում կարող են ունենալ:

**Կարց.-** Գոյութիւն ունի այն կարծիքը, թէ մեր ազգային իշխանութիւնը խորականութիւն դնելով իրանահայերի միջև, չի կարողացել կամ չի ցանկացել օգտագործել համայնքի բոլոր մասնագէտ կամ լուստեղեակ ու կարող ուժերը, ի՞նչ ծրագրեր ունէք այդ թերութիւնը վերացնելու ուղղութեամբ:

**Պատ.-** Այս յայտարարութիւնը իրականութեանը չի համապատասխանում, պէտք է ընդունենք, որ միշտ համագործակցութեան ասպարէզը բաց է եղել: Այս Թեմական Խորհուրդը, իմ ընտրելուց քանի ամիս յետոյ, մի քանի անգամ մամուլի միջոցով դիմել է իրանահայութեանը և ողջունել անհատների տարբեր կարծիքները,

նաեւ սպասումները՝ առաջարկների եւ համագործակցութեան համար: Որպէս հիւսիսային իրանահայութեան պատգամատր, նոյն աշխատանքը ես պէտք է շարունակեմ անելի լայն ասպարէզով: Մէկ ցատու կողմ էլ




գոյութիւն ունի, դա մեր ազգային դրածքի ճանաչելու խնդիրն է, ես ոչ մի դժարութիւն չեմ տեսնում համագործակցելու բոլոր այն միութիւնների, դրածքների, եւ հասարակութիւնների հետ, որոնք ընդդիմադիր են եղել եւ պաշտպանել են մէկ ուրիշ թեկնածուների, նրանց հետ համագործակցելու որեւէ դժարութիւն չկայ, բուն նպատակը մեր հանրային, հասարակական, կրթական եւ կրօնական խնդիրները հարթելու մէջ է, կարծում են, որ բոլորս նոյն նպատակներն ենք հետապնդում: Թերութիւններից մէկը հետեւեալն է, որ նախկինում եղել են որոշ միութիւններ, որոնք հակադրել են մեր ազգային դրածքի հետ եւ պաշտօնապէս չեն ճանաչել այն, դրանց հետ յարաբերութիւնը մի քիչ ցատու կողմ է: Բարեբախտաբար վերջին մի քանի տարիների ընթացքում որոշակի տեղաշարժ կայ, և այս խոչընդոտը, իմ կարծիքով, վերացած է, ես թէ՛ որպէս Թեմական Խորհրդի անդամ եւ թէ՛ որպէս ապագայ խորհրդարանի պատգամատր, համաձայն են, որ մեր գաղութում գոյութիւն ունեան տարբեր կարծիքներ՝ գաղութի շահերը պաշտպանելու համար, լինեն տարբեր ուղիների առաջարկներ. մարդ անհատի բանականութիւնը բնութեան հետ համապատասխանեցնելը բնական է: Բայց անցեալում բոլոր նրանք, ովքեր անտեղի եւ երբեմն գռեհիկ ու սխալ քննադատութիւններ էին անում, միայն դժարութիւններ կարող էին ստեղծել այս համագործակցութեան համար. սա բացասական դիրքորոշում է հանդիսանում մեր ազգային դրածքի հանդէպ:

**Կարց.-** Որո՞նք են Ձեր առաջնահերթ խնդիրները, որ կցանկանայիք որպէս պատգամատր լուծել խորհրդարանում:

**Պատ.-** Արդէն իմ բազմաթիւ ելոյթներում ընդհանուր ծրագրերը եւ ներկայացրել են, ժողովուրդը տեղեակ է, եւ Ալիք օրաթերթը գրել է, բայց կարելի է հեթաբանութեամբ նշել, որ առաջինը մեր դպրոցների խնդիրն է՝ և՛ մասնակի, և՛ ընդհանուր դժարութիւններով, նաեւ կրթական մակարդակի եւ հայեցի դաստիարակութեան հարցը: Երկրորդը իսլամական պատժամիջոցների օրէնքներն (Ղանուն մոջազաթ էսլամի) է եւ այն խորականութիւնները, որ գոյութիւն ունեն «Ղեսաս Ահալ

Շախսի» համար: Երբորդն այն է, որ ես հարիւր տոկոսով պիտի բոլոր իմ իրատւոյններից օգտւեմ եւ նեցուկ կանգնեմ մեր ազգային դրածքի՝ Առաջնորդարանի հաստատմանը: Չորրորդը՝ երկրի ներսում տեղի ունեցած ընդհանուր դժարութիւններն են, որոնցից մեր համայնքն էլ ձերբազատւած չէ, օրինակ՝ անգործութիւնը, տնտեսական վիճակը, երիտասարդների բարձրագոյն կրթութիւնը շարունակելու դժարութիւնները եւ երիտասարդութեանը յուզող այլ խնդիրներ: Իրան-Հայաստան յարաբերութիւնների բնագաւառում մեծ գործ է արւած եւ դեռ անելիքներ շատ կան, մեր միութիւնների համար տնտեսական աղբիւրների ապահովումը պետական բիջէլից: Ուրեմն, սրանք ընդհանրութեան մէջ այն բոլոր գծերն են, որոնք պէտք է հերթականութեամբ կամ միասնաբար իրականացնել:



**Շարք.-** Իրանահայերը ի՞նչ հարցերով, ինչպէ՞ս, որտե՞ղ եւ ե՞րբ են կարող դիմել Ձեզ:  
**Պատ.-** Ես նախնական դրածքի մասին մտածել եմ. այն հաւանաբար կլինի հետեւեալը. մենք մեր թաղերում կունենանք գրասենեակներ եւ գրասենեակի պատասխանատուներ, որոնց կարող են դիմել եւ դժարութիւնները գրաւոր արծարծել, դրանք կփոխանցեն ինձ, ես պիտի աշխատեմ դրանց լուծում տալ: Իհարկէ, կարող է նաեւ թաղերում ամենօրեայ գրասենեակ ունենալը դժարութիւններ ունենայ, բայց առնուազն շաբաթը մի քանի օր՝ ճշտած ժամերով, գրասենեակը իր պատասխանատուով կունենանք, իսկ ես ժողովրդի հետ պէտք է հանդիպեմ իմ ընտրատարածքը հանդիսացող թաղերում՝ թաղի եկեղեցական խորհրդի, թաղի քահանայի, ծնողական խորհրդի, եւ եթէ միութիւններ կան նրանց վարչութիւնների, ինչպէս նաեւ թաղերից մեր Պատգամատրական Ժողովի այն անդամների հետ, որոնք ներկայացնում են այդ թաղը: Կարծում եմ, որ այսպիսով հնարատր կը լինի օրգանական կապ հաստատել պատգամատրի եւ ժողովրդի միջեւ:  
**Շարք.-** Ձեզ ընդդիմադիր ուժերը որո՞նք են, եւ ի՞նչ քաղաքականութիւն կամ մօտեցում էք որդեգրելու դրանց հանդէպ:  
**Պատ.-** Կարծում եմ, որ յստակօրէն կարիքը չկայ նրանց անունները նշելու, շատ բնական եւ ընդունւած դեմոկրատական ձեւ է, այն որ ամէն մի հաւաքականութեան

մէջ լինեն տարբեր կարծիքներ, եւ այս տարբեր կարծիքները կարող են լինել նաեւ ընդդիմադիր դիրքերի վրայ, բայց դրանով չի բացառւում համագործակցութիւնը՝ նոյն նպատակների համար աշխատանքը: Իմ քաղաքականութիւնը լինելու է համագործակցութեան քաղաքականութիւն, բայց ընդհանուր պայմանը մեր ազգային դրածքի ընդունումն է, եւ ոչ թէ այն տեսակէտը, որ չպիտի քննադատուի այդ դրածքը, եւ ինչ որ արւում է մեր ազգային դրածքի կողմից, պէտք է որպէս հալած իւղ ընդունուի, իհարկէ ընդհանուր դրածքը, ըստ իս, պէտք է որպէս բարձրագոյն ազգային դրածք ճանաչուի:  
**Շարք.-** Ազգային դրածք ասելով ի՞նչ նկատուի ունեք:  
**Պատ.-** Ազգային դրածքը հետեւեալ ձեւով կարելի է բացատրել, որ մեր գաղութում բարձրագոյն ժողովը՝ Պատգամատրական Ժողովն է, որն ընտրւում է ուղղակի ժողովրդի կողմից: Որպէս գործադիր մարմին, դրանից ընտրող՝ Թեմական Խորհուրդն է, որը ղեկավարում է Սրբազան Հայրը՝ որպէս նախագահ: Այսպիսով այս երեքը միմեանց հետ կազմում են մեր գաղութի ազգային եւ կրօնական դրածքը կամ ղեկավարութիւնը, իհարկէ, բնականաբար Սրբազան Հօր կողքին գոյութիւն ունենալու քահանաները, բայց Սրբազան Հայրը կուրծ է՝ որպէս նախագահ, Պատգամատրական Ժողովը՝ որպէս բարձրագոյն ժողով եւ Թեմական Խորհուրդը՝ որպէս բարձրագոյն մարմին: Այս երեքին կարելի է համարել մեր գաղութի ազգային եւ կրօնական ղեկավարութիւն կամ իշխանութիւն:  
**Շարք.-** Իրականութեանը համապատասխանու՞մ է, այն բանը, թէ համայնքում բոլոր հայկական ուժերի կողմից ընդունւում է ազգային դրածքը, այսինքն ոչ մի ուժ գոյութիւն չունի՞, որ ասի մենք ազգային դրածքը, կամ կառոյցը չենք ընդունում:  
**Պատ.-** Որոշ անհատներ բնականաբար այդպէս են ասում, եւ նոյնիսկ եղել են բազմաթիւ մարդիկ, որոնք դիմել են Թեմական Խորհրդին, ներկայանալով որպէս համայնքի խնդիրներով զբաղողներ, եւ առանց այն, որ յստակ մէկ միութեան կամ հաւաքականութեան անուն տան, սկսել են խօսել ժողովրդի անունից: Բնականաբար Թեմական Խորհրդի դուռը բաց է բոլորի դիմաց եւ ցանկացած անհատ կարող է դիմել եւ իր մտահոգութիւնները փոխանցել, բայց երբ խօսում են մի հաւաքականութեան մասին, պէտք է ճանաչենք, թէ այս հաւաքականութիւնն ինչ է՝ միութիւն է, անուն ունի՞, որտե՞ղ է իր կենտրոնատեղին եւ ի՞նչ է իր ընդհանուր գործելակերպը: Այս դժարութիւնները հարթելու դէպքում ես կարծում եմ, որ համագործակցութեան որեւէ խոչընդոտ չի լինի:  
**Շարք.-** Ըստ Ձեզ, սփիւռքահայերը ընդհանրապէս, եւ իրանահայերը մասնատրապէս, ինչպիսի՞ քաղաքականութիւն պէտք է որդեգրեն Հայաստանի Իշխանութեան նկատմամբ եւ հայ-իրանական յարաբերութիւններում:  
**Պատ.-** Կարծում եմ, որ սա արդէն բաւականաչափ պարզ է, սփիւռքահայերը անկախ իրենց կուսակցական պատկանելիութիւնից եւ գաղափարներից, Հայաստանի իշխանութիւնը, Հայաստանի պետականութիւնը ուժեղացնելու եւ օժանդակելու մէջ, նոյն նպատակներն ունեն, թէեւ տարբեր ձեւերով են մօտենում: Այս ուղղութեամբ

ընդհանուր տարող քաղաքականությունը եւ նպատակը պիտի լինի օժանդակել Հայաստանին: Բնականաբար քաղաքական կուսակցություններն ունեն տարբեր ուղիներ եւ նպատակներին հասնելու տարբեր ծրագրեր: Առիթ պիտի տրուի դրանց իրականացմանը: Այստեղ եւս խիստ քաղաքական տարբերություններ չեն տեսնում գերագոյն նպատակի մէջ, այն է՝ օժանդակել Հայաստանին եւ հայկական պետականութեանը: Իսկ ինչ վերաբերում է Իրան-Հայաստան փոխյարաբերութեանը, եւ կարծում են, թէ բոլորս արդէն տեղեակ ենք, որ երկու պետություններն էլ խիստ շահագրգռած են, մեծ դաշտ կայ այս ուղղութեամբ՝ աշխատանք տանելու, մեր նախկին պատգամաւորները՝ պրն. Վարդան Վարդանեանը եւ Արտուր Բաղումեանը, շատ աշխատանքներ են տարել եւ, բնականաբար, նոր խորհրդարան ընտրելով, եւ եւս տեսնում են մեր երկու երկրների փոխյարաբերությունների զարգացումը բոլոր բնագաւառներում: Եւ եւս էլ այդ զարգացման մէջ, իմ կարողութեան սահմաններում, օգտակար կլինեն:

**Վարդ.** Արդեօ՞ք կողմ էք ազգային հարցերի թափանցիկութեանը: Ինչպէ՞ս էք գնահատում այդ երեսոյթը մեր ազգային իշխանութեան գործունէութեան մէջ: Եւ իսկապէ՞ս դրանք թափանցիկ են եղել մեր համայնքի համար:

**Պատ.** Եւ անձամբ միշտ համաձայն եմ եղել թափանցիկութեան քաղաքականութեան հետ: Ժողովուրդը եւ, ընդհանրապէս, մարդ անհատը պէտք է իր դերն ունենայ ազգային խնդիրների լուծման մէջ: Այն խնդիրների, որոնց ինքը տեղեակ չէ, բնականաբար ցանկութիւն եւ իղձ չի ունենայ մասնակցելու, եւ յստակօրէն կարելի է ասել, որ թէ՛ պետութեան առջեւ եւ թէ՛ մեր համայնքում այս խնդիրը բարձրացել է եւ պէտք է զարգանայ: Դժբախտաբար ժողովրդին տեղեկութիւն հաղորդելու միջոցները մի փոքր սակաւ են, այդ միջոցներից մէկը մամուլն է, միւսը՝ հայկական ռադիօժամն է, բայց թույլ է, թէ կարիք կայ անելի գործնական միջոցներով ժողովրդին հաղորդակից դարձնել խնդիրներին, ի հարկէ, որոշ չափով էլ կարելի է ասել, որ ժողովուրդը առօրեայ աշխատանքի եւ օրայ ղեկարգութիւնների մէջ մարմնավոր լինելով, հետաքրքրութիւնը կորցնում է կամ անելի քիչ է հաղորդակցում այս խնդիրների հետ: Չնայած դրան, պէտք է նշեն այն փաստը, որ ժողովուրդը իր մասնակցութեամբ խորհրդարանական ընտրություններին ցոյց տուց, թէ իսկապէս մեր ազգային խնդիրներն իրեն յուզում են: Կարծում են, որ հետեւեալ ձեւերով է հնարատր այս աշխատանքը ակտիւացնել՝ անելի սիստեմատիկ ձեւով Թեմական Խորհրդի աշխատանքները զեկուցել ժողովրդին, Պատգամաւորական Ժողովների նիստերի մասին մանրամասնօրէն տեղեակ պահել եւ ուղղակի կապ հաստատելով զարգացնել այս թափանցիկութեան քաղաքականութիւնը:

**Վարդ.** Նախկին հայ պատգամաւորները իրենց ընդդիմադիր հասարակական ու մշակութային ուժերին չէին հանդիպում եւ նրանց հարցերով չէին զբաղւում, արդեօ՞ք Դուք ցանկութիւն եւ ծրագիր ունեք այդ անհիմաստ թերութիւնը վերացնելու ուղղութեամբ:

**Պատ.** Ազգային շահերը հետապնդելու համար, պատգամաւորը չպէտք է խորութիւն դնի ընդդիմադիր եւ ոչ ընդդիմադիր ուժերի միջեւ՝ դժարութիւնները հարթելու համար: Բայց փոխյարաբերությունների ուղղութեամբ գտնում են, որ խոչընդոտը միայն ազգային դրածքի ճանաչելն է, այս ճանաչումը չպէտք է բնութագրել, թէ հարիր տոկոսով, ինչ որ կատարւում է պէտք է ընդունել, կամ քննադատական որեւիցէ ընթացք, դիրքորոշում եւ արտայայտութիւն չունենալ: Առողջ քննադատութեամբ է, որ մեր մարմինները եւ մեր դրածքը կարող են



արդիւնատու լինել, բայց այստեղ ցատու կողմը հետեւեալն է, որ չճանաչելով, անբաստանելով, զրպարտելով եւ զանազան որակումներ անելուց յետոյ սպասել, թէ փոխյարաբերությունները նորմալ կլինեն, մի փոքր անբնական սպասելիք է: Կարծում են, որ որոշ բարելւաման կարիք ունեն մեր միութիւններն ու հաստատութիւնները: Նրանք, ովքեր տարբեր ձեւերով են մօտենում մեր ազգային դրածքին, կարող են դիմել Թեմական Խորհրդին, իրենց կազմը ներկայացնել, ծանօթացնել, Թեմական Խորհուրդն էլ կողջունի նրանց: Միութիւնները կարող են իրենց ծրագիր-կանոնագրի եւ նպատակների մասին համառօտակի ձեւով տեղեկութիւններ փոխանցել, եւ այս բանն անելուց յետոյ, եւ իսկապէս համագործակցութեան որեւիցէ խոչընդոտ եւ դժարութիւն չեն տեսնում: Յուսով են, որ այս նոր ստեղծւած իրավիճակում, թէ՛ երկրում եւ թէ՛ մեր համայնքում այս հաստատութիւնները, այսինքն՝ ընդդիմադիր ուժերը, կամ ինչպէս էլ որ անունենք, անելի շատ պէտք է համագործակցեն մեր ազգային դրածքի հետ, եւ այդ դէպքում մեր գաղութը կկարողանայ անելի կազմակերպւած աշխատել գոյատեւելու համար:

Իսկ վերջում, եւ շնորհակալութիւն եմ յայտնում Լոյս երկշաբաթաթերթին, որ այս հարցազրոյցը կազմակերպեց: Յուսով են, որ շուտով մեր գաղութը ակնհայտ կլինի այս երկշաբաթաթերթի հրատարակմանը եւ կօգուտի արժարժուած նիւթերից ու մտքերից:

*Հարցազրոյցը վարեց  
Դոկտ. Ռ. Սարդարեանը*

# Զինդատախազ Գ.Զահանգիրեանի Մարտի 10-ի Մամուլի Ասուկիսը

Ռուբէն Մարդարեան

Այժմ նախաքննութեան մարմինը իր տրամադրութեան տակ ունի բաւարար սպացոյցներ այն մասին, որ Նայիրի Յունանեանի եւ միւսների դիտարկումները ուղղաձուգ է եղել իշխանութիւնը զարթելու, բացի այդ յանցագործութեան կատարման ընթացքում, մէկից անկէ անձանց ապօրինի ազատութիւնից զրկելու գործին: Ն.Յունանեանը եւ իր անմիջական յանցակիցները եղել են մեռակ, թէ՛ նրանց գործողութիւնները թելադրած, կամ ծրագրաւորած են եղել դրսից, արդէ՞ք նրանք իրականում օժանդակութիւն պէտք է ստանային, կամ այդպիսի օժանդակութիւն նրանց խստացաւ՞ էր, թէ ոչ:



Յանցագործութեան անմիջական կատարողները չեն քաջցրել իրենց ինքնութիւնը՝ դէմքերը, իրենց ուլ լինելը, անկէն դա հրապարակել է իրենց կողմից: Սպանութիւնները կատարելուց անմիջապէս յետոյ չեն դիմել փախուստի, յետոյ էլ փախուստի փորձեր չեն ձեռնարկել, դէպքից առնազն 15-20 րոպէ անց նմանօրինակ հնարատրութիւնն ունէին: Նայիրի Յունանեանը ԱԺ դահլիճում գործունէութեան մշակած յստակ ծրագիր է ունեցել, եւ իր ցուցմունքների համաձայն, իրեն խստացաւ՞ է եղել այդ ծրագրի իրականացումը, նա ԱԺ-ի շէնքի շուրջ հաւաքելու կոչով պէտք է դիմէր ժողովրդին, պէտք է դահլիճ հրախրէր հանրապետութեան նախագահին, որը ճնշման տակ իրեն պէտք է նշանակէր ժամանակաւոր կառավարութեան ղեկավար, նա ձեռքի տակ պատրաստ ունեցել է այն օրէնքների եւ որոշումների նախագծերը, որոնք պէտք է ընդունէր ԱԺ-ը եւ այդպէս շարունակ: Զննութեանը ձեռք բերած տեղւոյնը ապացուցում են, որ դէպքից մի քանի ժամ յետոյ Նայիրին եւ իր համախոհները պատ-րաստ սպասել են դրսից ինչ-որ ուժերի օժանդակութեանը, յանձնելու միտումները նրանց մօտ դրսեւորել են միայն այդ սպասումները չիրականանալուց յետոյ: Եթէ ոչ մի ուժ չէր ուղղորդում կամ աջակցում Նայիրի Յունանեանին, ապա նա ու՞մ պատուէրով էր կանխամը-տաձած սպանում նաեւ Կարէն Դեմիրճեանին, չէ՞ որ ոչ Կարէն Դեմիրճեանը, ոչ էլ նրա քաղաքական յետնորդը, Նայիրի Յունանեանի բառերով, ոչ մի ընտրութեան չի խոչընդոտել եւ ոչ էլ վերջին տարիների քաղաքին է մասնակցել: Իսկ որ Կարէն Դեմիրճեանին կանխամը-տաձած են սպանել, դուք դիտել էք այդ սպացուցող յայտնի տեսաժապատէնը, ուրեմն իրօք այս յանցագործութեանը իշխանութիւնը զարթելու խնդիր էր լուծում:

Արդէ՞ք սխալ ճանապարհով է գնում նախաքննութիւնը: Վստահ են, որ ոչ. սա դատարկ խօսք չէ, այն հիմնաւոր է գործի ողջ միութեան, գործում առկայ սպացոյցների գնահատման վրայ:

Ազգային հեռուստատեսութեանը հեռարձակած հաղորդումը, հոկտ. 27-ի դէպքերի հետ կապւած, եւ գնահատում են որպէս խոչընդոտ, ոչ թէ որովհետեւ այդ հաղորդումը եթէր է հեռարձակել, այլ որովհետեւ դա ազգային հեռուստատեսութիւն է, եթէ օրինակ Ա+1 -ը կամ այլ հեռուստաընկերութիւն, կամ ոչ պաշտօնական մամուլ տպագրէր կամ ասէր ինչ-որ բան, եւ դա բնական կհամարէի, բայց ազգային հեռուստատեսութեան նման վարելակերպը անթոյլատրելի է:

Գազիկ Զահանգիրեանը նշել է, որ 27-ի գործը վարող քննչական խումբը համարել է դատախազութեան, ներքին գործերի եւ ազգային անվտանգութեան նախարարութիւնների քննիչներով: Գործի քննութեան սկզբում առաջ քաշած վարկածների մեծ մասը հերքել է, խումբն առայժմ աշխատում է դրանցից մի քանիսի վրայ:

Հիմա մեզ ինչու՞ են մեղադրում, եւ ընդհան-րացնեն մեզ ուղղաձուգ մեղադրաքննելը, որ մարդկանց ապօրինի կալանաւորել եւ ընկել ենք ծուղակը, որ մեղադրեալների հետ քննչական գործողութիւններ են տարւում, առանց պաշտպանների զրոյցներ են վարւում, վերջին մեղադրանքն էլ, թէ դեղամիջոցներ են կիրառւում: Դրանցից իւրաքանչիւրին կփորձեն պատասխանել հակիրճ (ազգ. հեռ. չի հեռարձակել Գ.Զ.-ի պատասխանները): Միայն ամենավերջին մեղադրանքի՝ կալանաւորների հանդէպ դեղամիջոցներ կիրառելու վերաբերեալ, ըստ ազգային հեռուստատեսութեան, զինդատախազը առաջարկել է կասկածի դէպքում բժշկական փորձաքննութիւն պահանջել: ՀՅԴ-ի անդամ եւ ազգային հեռուստատեսութեան փոխտնօրէն Յարութիւն Յարութիւնեանն էլ, որը մեղադրւում է 27-ի դէպքերի կապակցութեամբ, վատ է զգացել միայն այն պատճառով, որ ետօրեայ հացադուլից յետոյ քննիչների հետ հանդիպել է՝ քաղցած:

Մենք չենք վիճարկում խօսքի եւ մամուլի ազատութեան հանրաճանաչ սկզբունքներն ու իրաւունքները, սակայն ընդունելի չէ ազգային հեռուստատեսութեան օգտագործումը պետական մարմնի՝ դատախազութեան դէմ: Կոյրի համար էլ պարզ է, թէ ով եւ ինչ նպատակով է դա կազմակերպում: Մոյն գործով մեղադրեալ Յարութիւն Յարութիւնեանը Հայաստանի ազգային հեռուստատեսութեան պետական բաժնետիրական ընկերութեան հիմնադիր լիազօր ներկայացուցիչն է այսօր, հիմնադիր լիազօր ներկայացուցիչն է նաեւ յայտնի ազգային հեռուստատեսութեան գործադիր տնօրէն Տիգրան Նաղդալեանը: Ես կարծում եմ, որ շարադրածը բաւական է, որպէսզի դուք գնահատէք ազգային հեռուստատեսութեան կողմից բարձրացւած աղմուկը Յարութիւն Յարութիւնեանի, Տիգրան Նաղդալեանի փոխտնօրէնի եւ Ալեքսանդր Յարութիւնեանի թէ՛ ձեռքակալման՝ կալանաւորման, եւ թէ՛ նրանց պաշտպանների մամուլի ասուլիսի շուրջ:

Գազիկ Զահանգիրեանը տեղեկացրեց, որ Նայիրի Յունանեանը դեռեւս 98-ի դեկտեմբերից եղել է ազգային անվտանգութեան մարմնիների տեսադաշտում, սակայն ազգային անվտանգութեան նախարարութեան բաժնի պետերից մէկի պաշտօնական անփութութեան հետեւանքով, անհրաժեշտ ստուգում չի կատարւել եւ փաստը անուշադրութեան է մատուել:

# Մուստաֆա Քեմալ Փաշան 1915-1916 թթ. ցեղասպանութեան մասին

ՀՀ ԳԱԱ պաշտօնակո  
Մ.Գ. Ներսիսեան

Ֆրանսիայի Ազգային Ժողովի ստորին պալատի 1998 թ. մայիսին ընդունած որոշումը՝ ճանաչել հայերի ցեղասպանությունը, ինչպես յայտնի է, մեծ իրարանցում է աղմուկ առաջ բերեց Թուրքիայում: Երկրի պաշտօնական շրջանները յատկապես խիստ յարձակում սկսեցին բոլոր նրանց դէմ, ովքեր խօսում կամ գրում են այն մասին, թէ 1915-1916 թթ. Օսմանեան կայսրությունում տեղի է ունեցել արեւմտահայութեան ցեղասպանություն: Այսպիսի կարծիք ունեցողներին բուրբակամ իշխանությունները համարում են իրենց երկրի թշնամիներ:

Չարմանալին, սակայն այն է, որ թուրք աղմկարարները «մոռանում են» այն իրողությունը, որ հայութեան Մեծ Եղեռնի փաստը դեռևս տասնեակ տարիներ առաջ հրապարակօրէն ընդունել է նաեւ թուրք յայտնի մացիոնալիստ, Թուրքիայում այսօր գրեթէ սրբացած Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը («թուրքերի հայրը»): Բանն այն է, որ Թուրքական Հանրապետութեան հիմնադիր, նրա առաջին պրեզիդենտ Մուստաֆա Քեմալը 1926 թ. յունիսի 22-ին Անկարայում շէյքարացի լրագրող Էմիլ Հիդերբրանտի հետ ունեցած հարցազրոյցի ժամանակ խօսելով Օսմանեան կայսրությունում 1915-1916 թթ. տեղի ունեցած բարբառությունների մասին ասել է. «Երիտթուրքերը պէտք է պատասխան տային մեր հպատակ մի քանի միլիոն քրիստոնեաների համար, որոնք դաժանօրէն արքայութեան իրենց հայրենի օջախներից եւ ոչնչացուցին...» (Young Turkey Party, who should have been made to account for the lives of millions of our Christian subjects who were ruthlessly driven in masse from their homes and massacred...):

Այս տողերը տպագրուեցին «Լոս Անջելէս Իրգամիներ» թերթի 1926 թ. օգոստոսի 1-ի համարում: Անցել են շատ տարիներ, բայց ոչ ոք չի հերքել մշտապարկումը:

Ֆրանսիացի յայտնի հրապարակախօս Պոլ դի Վեոն իր մի շարք աշխատութիւններում եւ մասնատրապէս «Ալեքսանդրեանի աղէտը» աշխատութեան մէջ, որ լոյս է տեսել Փարիզում, Ֆրանսերէն, 1938 թ., գրել է, որ Մուստաֆա Քեմալ փաշան 1919 թ. յունիսի 27-ին Ստամբուլի ռազմական դատարանում տաճ իր ցուցմունքներում երիտթուրքերի պարագլուխներ Էնեթ, Թալէթ, Չամալ փաշաների եւ նրանց գործակիցների մասին ասել է, որ «նրանք հաստատել էին բռնակալութեան բոլոր ձեւերը, կազմակերպել տեղահանութիւն եւ կոտորած, նրանք այրել էին ծծկեր երեխաներին՝ նրանց վրայ նախ լցնելով, բռնաբարել կանանց եւ երիտասարդ աղջիկներին՝ ոտքերն ու ձեռքերը կապած ծողկների աչքերի առջեւ, խել աղջիկներին հայրերից ու մայրերից, բռնագրաւել շարժական ու անշարժ գոյքը եւ Միջագետքում թշուառ վիճակում գտնուող մարդկանց արտոյել՝ ճանապարհին գործադրելով ամէն տեսակի դաժանութիւն: Նրանք նաւակներ են նրստեցրել հազարաւոր անմեղ մարդկանց եւ ջրախեղդ արել ծովում: Իրենց մարդկանց միջոցով յայտարարել են մահմեդականութիւն ընդունելու անհրաժեշտութիւն... Մովահար ծերունիներին հարկադրում էին քայլել ամիսներով, թշուառ նրանց հարկադրական աշխատանքի... Կանանց նետում էին հասարակաց տներ, դնում նրանց այնպիսի պայմաններում, որոնք նախորդ չունեն ոչ մի ազգի պատմութեան մէջ»:

Ինչպէս տեսնում ենք Մ.Քեմալն անվերապահօրէն ընդունել է հայերի ցեղասպանութեան փաստը: Ինչու՞: Համենայն դէպս ոչ այն պատճառով, որ նա եղել է Թուրքիայի թշնամի: Գուցէ նա եղել է հայաստէ՞ր: Իհարկէ, այդ եւս բացառում է: Հանրայայտ է, որ 1920-1922 թթ. Քեմալ փաշան հայերի ու յոյների նկատմամբ իրագործեց դաժան ցեղասպանութեան քաղաքականութիւն: Բաւական է յիշել միայն այն, թէ ինչպիսի բարբառություններ կատարեցին քեմալիստ ազգայնամոլները 1920-1921 թթ. Արեւելեան Հայաստանում եւ 1922 թ. Իգմիրում (Չմիտնիայում):

Աւելորդ չեմ համարում նշել հետեւեալ հանգամանքը եւս: Առաջին համաշխարհային պատերազմի տա-

րիներին Թուրքիայի դաշնակից Կայսերական Գերմանիայի պետական արխիւներում պահուում են գաղտնի եւ խիստ գաղտնի բնոյթի շատ փաստաթղթեր, որոնց մի զգալի մասը դեռեւս 1919 թ. հրապարակել է Եօհաննէս Լեպսիուսը «Գերմանիան եւ Հայաստանը» գերմաներէն մեծածաւալ գրքում: Այստեղ գետեղած դոկումենտներում բազմիցս խօսուում է այն մասին, որ 1915-1916 թթ. երիտթուրքերի (իթթիհաղականների) կառավարութիւնը նախօրօք կազմուած ծրագրով ու ամենավարագ ձեւերով իրագործել է արեւմտահայերի գեւոցիդը: Հարց է ծագում, ինչու՞ մինչեւ այսօր ոչ մի թուրք պատմաբան չհերքեց այդ փաստաթղթերը: Նկատենք, որ չեն հերքած նաեւ նման կարգի արխիւային այն միւթերը, որոնք հրապարակել են Աւստրո-Հունգարիայում ու Բուլղարիայում: Յիշենք, որ այս երկու պետութիւնները եւս 1914-1918 թթ. պատերազմի ժամանակ նոյնպէս Թուրքիայի դաշնակիցներն էին եւ բնական է, որ չէին կարող կեղծ փաստաթղթեր յօրհնել իրենց բարեկամ պետութեան դէմ:

Յայտնի է, որ Մեծ Եղեռնի՝ արեւմուտահայութեան 1915-1916 թթ. ցեղասպանութեան վերաբերեալ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Միւս-ցեղաՆահանգների եւ մի շարք այլ երկրների պետական արխիւներում եւս պահուում են հարուստ միւթեր, որոնց մի զգալի մասն արդէն հրապարակել է: Թուրքական կառավարութեան անօրինական ոճրագործութիւնների մասին կան բազմաթիւ անհերքելի փաստեր եւ վկայութիւններ մեծ ողբերգութեան ժամանակակիցներ ու ակնմատեսներ Ե. Լեպսիուսի, Ա. Վեզների, Հ.Շարուների, Ջէյմս Բրայսի, Ա.Թոյնթիի, Իւ.Վեսելովկու, Վ.Գորդլիսկու, Հ.Մորգենթաուի, Հ.Գիբոնսի, Հ.Բարթիի, Ֆ.Նանսէնի, Գ.Պալաքեանի, արեւմտահայերի պատրիարք Չաւէն արքեպիսկոպոսի եւ ուրիշների յիշողութիւններում ու աշխատութիւններում, ինչպէս նաեւ հետագայում տարբեր լեզուներով լոյս տեսած ուսումնասիրութիւններում, որոնց թիւը բաւական մեծ է (Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանութիւնը. մատենագիտութիւն. Երևան, 1995):

«Պատմաբանասիրական Հանդէս»-3, 1998

# Հայկական Եւրիզոնը

Վարդգես Պետրոսեան

Խոտորչուր գիւղում հարսանիք էր:

Դեկտեմբերեան ձիւնն իջնում էր երկնքից, հար-սանեկան ճերմակ քօղի պէս ծածկելով լեռները, տները, ծառերը: 1915-ից յետոյ ամբողջ գիւղը անցել էր Արաքսը, պատսպարուել Շիրակում, բայց յաջորդ գարուն, երբ թուրքերը ետ էին շարուել, նորից վերադարձել էին հայրենի գիւղ: Նորից դողանջել էին եկեղեցիների գանգերը, եւ ծախ էր ելել մարած օջախներից:

Մետաղը, ապակին չեն դիմանում ցրտի եւ շոգի կտրուկ անցումներին, մարդը դիմանում է, մարդը այդ ինչպէ՞ս է կարողանում անողորմ վշտից յետոյ շակել ուսերը, հրամայել սրտին եւ կրկին ուրախանալ: (Եւ յիշեցի ցնցող մի նախադասութիւն, որ կարդացել եմ լեռնագրադեան գերեզմանատանը. «Զարե՛ր, եղբ դիմաց-կուն՝ ինչպէս մարդիկ»):

Խոտորչուրցիներն ուրախանում էին, դուրուկահար-ները փչում էին, ինչպէ՛ս էին փչում, պարկապզուկը ծղրտում էր զիլ ու յաղթական, բոլոր աղջիկները գեղեցիկ էին, բոլոր տղամարդիկ՝ հերոս: Նաեւ վրէժ էր այդ հարսանիքը. դուք կարծում էք կոտորեցի՞ք մեզ, աղաղակում էր գուման, հա, հա, լսէք, տեսէք՝ մենք կանք, ապրում ենք, ուրախանում եւ այս գիշեր, հար-սանիքից յետոյ մի նոր խոտորչուրցի է բողբոջելու, ինն ամիս յետոյ գալու է լոյս աշխարհ՝ իր արեան մէջ յիշողութիւն, ցաւ եւ վրէժ:

Ծերերը, բուխարիկի մօտ նստած, վերյիշում էին ուրիշ-ուրիշ աղմկոտ հարսանիքներ, խորամանկ աչքով էին անում իրենց սնքած պառասներին, իսկ պառասները գուգուել- գարդարել էին եւ ջահելացել, լցուել հին օրերի արիւնով:

1917 թ. դեկտեմբեր. Արեւմտահայաստանը, եթէ արիւնից ծաղիկներ ծաղկէին, նոյնիսկ ճմռանը ծածկւած կլիներ կարմիր մեխակներով, լեռներում, կիրճերում հայ Ֆիդայիներն էին՝ տունտեղից, օջախից, երեխաներ ունենալու հեռաւոր յոյսից ձեռք քաշած տղերք, իսկ Խոտորչուրում հարսանիք էր (իրօք, «Խտրելով՝ հայերին չես հասկանայ»):

Եւ յանկարծ...

Մարդկային տաք կոկորդից դուրս թռած աղաղակի պէս տազնապալի ու զիլ հնչեցին Ազնախաչ եկեղեցու զանգերը:


Պարկապզուկը մի պահ լռեց, ծերերը քարկապ գցեցին յուշերի թելը, կանայք երկինք նայեցին՝ հայի հազար հինգ հարիւր տարի վախեցած աչքերով:

Եկեղեցու զանգ էր, թէ՞ թուաց...

Ողջ գիւղը՝ մայր ու մանուկ այստեղ է, եկեղեցու մօտ ո՞վ կարող էր լինել, եւ զանգն էլ ուրախութեան զանգ չէր: Թա՛հ, թէ՞ իրօք լսեցին...

Հարցական ու չարագոյժ լռութեան մէջ՝ նորից աղաղակեցին զանգերը: Գուցէ մահից փրկւած խելակորոյս մէկն է, որ իմաց է տալիս, թէ դեռ ապրում է եւ օգնութիւն է աղերսում: Գուցէ նա լսել է հարսանիքի ձայները եւ խելագարուել...

Մի քանի բուպէ՝ գիւղի ամենաազդեցիկ մարդիկ գլուխ-գլխի տոհմ, խորհուրդ արին, իսկ քիչ անց հինգ պնդակազմ տղամարդ արդէն լեռն էին մագլցում ձիւների միջով:



Հարսանիքն ընդհատեց: Մայիտակ քօղի տակ հարսը լաց էր լինում, եւ եթէ նա դրսում լիներ, արցունքները կսառչէին եւ մարգարիտներ դառած կզարդարէին հարսանեկան քօղը: Փեսան (նրան ասացին՝ չարժես տեղիցը) զալարում էր նստած տեղում, որովհետեւ ինքն էլ՝ գնացողների մէջ պիտի լինէր...

Եկեղեցու շուրջը կենդանի շունչ չկար: Նշմարեցին միայն մի քանի ոտնահետք, որ թափուղ ձիւնը դեռ չէր հասցրել ջնջել: Եկեղեցու ներսում էլ՝ ցուրտ անապատ էր, բայց տեսան մի մոմ էր վառում: Չանգի պարանն անշարժ կախուած էր՝ թուաց ոչ թէ գմբէթից, այլ երկնքից, ձեռք տոհմ՝ պարանը սառն էր: Նորից բակ դուրս եկան եւ յանկարծ մէկի աչքը տեսաւ. եկեղեցու փայտէ դռան վրայ սեւ ածուխով ինչ-որ բան էր գրւած: «Ռուսերէն է, - ասաց մէկը, - տեսներք ինչ է գրւած»: Խելք- խելքի տալով, իրար ուղղելով, խանգարելով, կարդացին.

«Օժեճօժեճի՛, շաճճա՛ ի՛ի-սի՛» ծօծե՛՛՛ ի՛ն՛ն ձաճճօ՛՛՛:

Այսինքն, քրիստոնեաներ, վաղը գիշերով թուրքերը պիտի յարձակեն ձեզ վրայ, փրկուեցէք...

Մնայլ նայեցին իրար երեսի:

Ո՞վ կարող է գրած լինել... Երեւի նոյն ձեռքը, որ քիչ առաջ եկեղեցու զանգն էր տալիս:

Խառնեցին իրար, ճնազնդերի պէս գլորեցին լեռնալանջով, ամեն մէկը մտքում կրկնելով ածուխով գրւած բառերը, որ հաղորդեն տեղը տեղին, առանց բառ բաց թողնելու կամ բառ փոխելու: Անտարբեր ու անհասկացող երկնքից դեռ թափում էր ձիւնը եւ ձիւնն արդէն սայիտակ չէր, արեան գոյնի էր եւ սարերի գլխին արդէն հարսանեկան քօղ չէր, այլ որդեկորոյս մօր սեւ գլխաշոր: «Ուրեմն, վաղը գիշեր, - մնայլ կնճռուտեցին ծերերը, - վաղը գիշեր...»: «Ի՞նչ եղաւ խաչեղբայրը, - ձայն տուց փեսայի հայրը, - հարս ու փեսան ե՞րբ են պարելու...»

Հարս ու փեսայի պարը գուման պիտի գլէր, պարկապզուկը պիտի ծղրտար, բայց միայն դուրուկները նազեցին՝ զալարած ուրախութեամբ, անգուսպ ցաւով, իսկ անարդիկ կուլ տուցին իրենց աղաղակը, որ պիտի խլացներ անգամ գոռնայի, պարկապզուկի ձայնը...

Եւ հարսը պարեց՝ նազելի ու շփոթւած: Եւ փեսան կանգնեց նրա թիկունքում՝ ջղածիզ ու անկուտրում, եւ

նրանց գլխին, ինչպես կարգն էր, մեղմ զնգոցով թափեցին ոսկեդրամներ, արծաթ, ձիւն...

«Աստուած շնորհատր անի», - օրհնեց խաչեղբայրը, քահանան մի քանի բառ մրմնջաց Աւետարանից, յետոյ հարսը հեզաքայլ գնաց իր ննջարանը, իսկ փեսան կրծքի կարմիր ժապաւենը փամփշտակալի փոխելով, քայլ արեց աւագներին միանալու: «Դու գնա նրա մօտ, - մեղմ ու անկոտորում ասաց հայրը, - դու պիտի՛ գնաս: Թուրքը էն է ուզում, որ դու չգնաս... նրա մօտ»:

Կասկածներ, իհարկէ, եղան. իսկ եթէ սո՞ւտ ահազանգ է, եթէ մէկնումէկը չար կատա՞կ է արել... բայց... «Քրիստոնէական... վաղը զիշերը... փրկւեցէք»: «Քարի ձեռք է գրել - վերջակէտ դրեց քահանան: - Քարի եւ սուրբ»:

Պատրաստուեցին ողջ զիշեր, յաջորդ ամբողջ օրը պատրաստուեցին, մէկառմէկ հաշուեցին ունեցած փամփշտուները, հրացան հասաւ նոյնիսկ մի քանի աղջկայ: Ոսոխը զիւղ կարող էր մտնել միայն լեռնանցքով, նրանք բարձրացան ժայռերի վրայ, սաւանների մէջ փաթաթած թաքնուեցին ձիւների մէջ:

Մարդկային վրէժի աքցանը պատրաստ էր իր գործն անելու: Մտայ իջաւ զիշերը, լուսինը չերեւաց եւ աստղեր չերեւացին, լաւ էր:

Կեսգիշերի դէմ աղմուկ լսեց, ձիւնը փափուկ էր, բայց լսեցին՝ մարդու, ձիւն ուռնածայն էր: Այո, թշնամին էր. գայիս էր լուռումունջ, սեւ ամալի նման. կլիմէին երեք-չորս հարիւր մարդ: Մա՞րդ... Այդ բառը ոչ ոք չմտածեց. եկողները մի՞թէ մարդիկ էին: Նա՛ էր մարդը, որ սեւ ածուխով գրել էր եկեղեցու դռներին: Եղաւ մի պահ, որ ամենքը մտածեցին այդ անյայտ, անանուն մարդու, ոչ, ինչ մարդ՝ այդ բարի հրեշտակի մասին, աւելի ամուր սեղմուեցին բռունցքները, ատամները դիպան իրար եւ թուլէն տաժանելիօրէն ձգեց-երկարեց:

Թուրքերը վստահ էին ու, իսկապէս, ինչպէս մտածել էին խտորջուրցիները, եկան- հաւաքեցին ձորում, իջան ձիւնից, մի կողմ դրին հրացանները... Դէ մի քիչ հանգիստ առնել էր պէտք՝ արիւնտ «աշխատանքից» առաջ: Եւ հէնց այդ ժամանակ պայթեցին վրէժի հրացանները:

Թուրքերը գլուխները կորցրած, վազեցին այստայն կողմ, մտան ձիւների մէջ: Բայց խտորջուրցիներն անվրէպ էին. ոսոխից հազիւ հինգ-վեց հոգի ազատեց:

Իսկ մի քանի օր անց՝ արդէն կանոնաւոր թուրքական զօրանասար գրոհեց փոքրիկ այդ գիւղը: Խտորջուրցիները յանկարծ տեսան- տարբերեցին թուրքական դիրքերի կենտրոնում խաչելութիւն էր եւ խաչածը կնոջ մարմին էր: Հետախոյզներ ուղարկեցին, նրանք ետ եկան ցնցած ու տխուր. խաչածը ուկրաինուհի Շուրան էր, Ալեքսանդրան, նրան զիտէին՝ թուրք սպայի կին էր, մի քանի անգամ եղել էր Խտորջուրում, աղօթել հայերի հետ նոյն եկեղեցում: Ուրեմն, նա էր զանգահարողը, եւ, բնական է, նա էր գրել եկեղեցու դռներին: (Ինչպէս յետոյ պարզեց, Շուրան պատահաբար լուսն է իրենց տանը հաւաքած թուրք զինուորականների խօսակցութիւնը եւ...)

Մարտեցին խտորջուրցիները եւ կայծակի պէս ճայթեց որոշումը՝ անկասելի, անբեկանելի եւ սրբազան, եթէ ողջ զիւղն էլ կոտորի, նրանք պիտի խլեն Շուրայի մարմինը: «Կարող է մեռնենք ամենքս էլ, - ասաց զիւղի նահապետը, - բայց...»: Չթողեցին, որ շարունակի. «Կմեռնենք ամենքս էլ, բայց ետ կխլենք սրբի մարմինը»:

Եւ խլեցին: Երեք հարիւր երեսունեօթ հրացանաւոր հայից հարիւր ութը մնացին ձիւների վրայ, բայց ուկրաինուհու մեռած մարմինը խլեցին: Թուրքերը շշմած էին այս դիմադրութիւնից, նրանք ճշգրիտ զիտէին խտորջուրցի տղամարդկանց թիւը, դա երեք անգամ ցուր էր, քան իրենց զօրքը: «Համարում են ստացել անհաւատները, - ասաց թուրք գնդապետը, - դադար պիտի տանք, ճար չկայ, մինչեւ զօրքը հասնի: Նրաք ո՞ր պիտի գնան...»:

Իսկ մինչ այդ՝ Շուրային թաղեցին նոյն այդ Ազնախաչ եկեղեցու ներսում, խորանի առաջ, քրիստոնէական ծեսի բոլոր օրէնքներով, եւ հնչեցին բոլոր զանգերը, եւ ամենքը, ով ողջ էր մնացել՝ մէկ տարեկանից մինչեւ հարիւր եօթ տարեկան Նաւասարդ հայրիկը, կոռացան համբուրեցին նրա լոյս-մաքուր, ազնական ճակատը: Եւ ձիւնի փաթիլները հանդարտ իջան, սպիտակ շուշանների պէս պարուրեցին նրա բզկուած մարմինը:

Յետոյ խտորջուրցիները զիշերով ճեղքեցին ոսոխի փշալարը եւ կրկին անցան Արաքսը:

... Նորածինն աղջիկ էր եւ նրա անունը որոշեց նոյն պահին՝ Շուրա:

Առասպել չէ այս ամէնը, պատմութիւն է, խոցող՝ ինչպէս վերք: Եւ եթէ այսօր, նորոգ Հայաստանում ապ-րում են խտորջուրցիների մի քանի սերունդ, նրան, միայն նրան են պարտական՝ Շուրային, որի գերեզմանն, աւա՛ղ, մնաց Արաքսից այն կողմ: Եւ ո՞վ պիտի ետ բերի այդ ազնի գերեզմանը: Չգիտեմ՝ ինչքան պիտի սպասես, Շուրա... Ներիւր մեզ, եթէ երկար...

«Լոյս» երկչաբաթաթերթը իր ցաւակցութիւններն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին եւ բոլոր սգակիրներին:

## ՏԻՎՐՈՒՆԻ

- Իշխանուհի Ղազարեան (Զարեան ՀաՖթվանի)
- Մեղա Պետրոսեան (Բէգ-Ալահվերդեան)
- Մանուակ Ինջիլեան
- Աւետիս Աբրահամեան
- Նատալիա Հայրապետեան
- Խորէն Գալստեան
- Եւգինէ Արամի (Աղաբէգեան)
- Մեղա Մանգասարեան (Պետրոսեան)
- Մարիամ Զաւարեան (Յովհաննիսեան)
- Ովսաննա Բարխուդարեան (Շահնազարեան)
- Յովհաննէ Աղաջանեան
- Սաթենիկ Սուրբեան (Մաղաբէլեան)
- Մինաս Դարբինեան
- Ռաֆայէլ Արզումանեան
- Յուսիկ Յարութիւնեան
- Անդրանիկ Ադամեան
- Արշակ Խուդաբախշեան
- Մինաս Դարբինեան
- Մինա Մինասեան (Աբրահամեան)

\* \* \*



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՇ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ


Էդ. Գերմանիկ

- Ե. Թոփչեան.- «Երիտասարդ Թուրքիան և հայերը» (հ.1,1909) , «Հարստահարութիւնները Տաճկահայաստանում. դիւան հայոց պատմութեան» (գիրք ԺԳ, 1915), «Յիշարակագիր Վանա ինքնապաշտպանութեան դէպքերուն(1915 թ. ապրիլ մայիս)» (1919):
- Մ. Յովհաննիսեան .- «Գորդեան հանգոյցը (թրքահայոց հարցի վերջին շրջանը)» (1907):
- Վահան Միրզազեան.- «Հայկական ջարդերու փաստաթղթերը» (հ. 1, 1920):
- Թ. Սկրտչեան.- «Ոճրապատում», (պր. 1, 1917), «Տիգրանակերտի նահանգին ջարդերը և քիւրտերու զագանութիւնները (ակամատեսի պատմութիւնը)» (1919):
- Մուշեղ արքեպիսկոպոս.- «Հայկական մղձաւանջը. քննական վերլուծումներ» (1916):
- Լ. Շաքրեան.- «Հայկական ջարդերը և թուրք վարիչները», (1919):
- Մ. Պարթեան.- «Կիլիկեան արհաւիրքը» (1910), «Տեղեկագիրք Ա. Թուրքահայ աղէտը. պատմական փաստաթղթեր» (1919):
- Եղիշէ Տէր Պետրոսեան.- «Տարօնոյ ինքնապաշտպանութիւնն ու ջարդը» (1920):
- Բագրատ Բորեան.- «Հայաստանը, միջազգային դիւանագիտութիւնը և ՍՍՀՄ-ը» (հ. 1-2, 1928-29):
- Սկրտիչ Ներսիսեան.- «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետութեան դէմ 1950-1870-ական թականներին», «Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում» (ռու. 1966, հայ. 1991):
- Աշոտ Յովհաննիսեան.- «Դուազներ հայ ազատագրական մտքի պատմութեան» (հ. 1-2, 1957-59) ,«Նալբանդեանը և նրա ժամանակը» (1955-56):

- Երանդ Սարգսեան.- Օսմանեան կառավարութեան ազրարային քաղաքականութիւնը Արևմտեան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին»(1957, ռու.), « Օսմանեան կայսրութեան եքսպանսիոնիստական քաղաքականութիւնը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին և պատերազմի տարիներին» (1962, ռու.) , « Օսմանեան կայսրութեան քաղաքականութիւնը Արևմտեան Հայաստանում և տերութիւնները 19-րդ դարի վերջին քառորդում և 20-րդ դարի սկզբին» (1973):
- Ծատուր Աղայեան.- «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից» (1976):
- Ջոն Կիրակոսեան.- «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայութիւնը» (1965), «Բուրժուական դիւանագիտութիւնը և Հայաստանը 19-րդ դարի 70-ական թթ.» (1978) , «Բուրժուական դիւանագիտութիւնը և Հայաստանը 19-րդ դարի 80-ական թթ.» (1980), «Երիտթուրքերը պատմութեան դաստատանի առաջ» (հ. 1-2 1982-83):
- Ս. Յակոբեան, Ս. Ստեփանեան.- «Արմ. Հայաստանի տեղը պետութիւնների զարթոյական ծրագրերում»:
- Հ. Ղազարեան , Ս. Մարկոսեան, Հ. Վարդանեան, Ա. Համբարեան, Մ. Արզումանեան.- «Արևմտահայերի սոց-տնտ. և հաս-քաղ. կացութիւնը XIX դ. 2-րդ կեսին և XX դ. սկզբին »:
- Յ. Ինճիկեան, Հ. Միմնեան.- «Թուրք ազգային բուրժուազիայի քաղաքականութիւնն ու զարթոյական քաղաքականութիւնը»:
- Ռ. Սահակեան, Ը. Թորոսեան.- «Իրադարձութիւնները Կիլիկիայում»:
- Հ. Թուրչեան, Ա. Հարութիւնեան.- «Հայ ժողովրդի կռիւր թուրք զարթոյների դէմ»:
- Հ. Պողոսեան , Ս. Պողոսեան, Մ. Քոչար.- Թուրքիայում քաղ. իրադրութեան և հայ ժողովրդի ազատագրական շարժման ընդհանուր հարցեր:
- Լ. Խորշուդեան, Է. Ջոնրաբեան.- Խորհրդային Ռուսաստանի վերաբերմունքը Հայկական հարցին:
- Տ. Բոյաջեան, Ս. Գաբրիելեան, Ը. Թորիկեան, Ռ. Յովհան-

- նիսեան,Վ. Տատրեան, Ռ. Աղայեան, Ռ. Միմնի, Լ. Նալբանդեան, Ժ. Լիպարիտեան, Մ. Յովսէփեան, Հ. Դեկմեջեան (ԱՄՆ), Գ. Բաղդեան, Ի. Կապրիելեան (Կանադա), Պ. Օհանեան, Ն. Բուրդուրեան (Արգենտինա), Ս. Աֆանասեան, Ա. Բեյլեբեան , Ժ. Շալեան, Ա. Տէր Միսսեան, Կ. Մուրադեան (Ֆրանսիա), Ժ. Քոչարեան (Գերմանիա), Ա. Ամուրեան, Էդ. Գերմանիկ Բաղդասարեան (Իրան), Ա. Ալայաճեան (Եգիպտոս),Զ. Մարդեան, Ա. Բուշկանեան (Լիբանան), Ռ. Պողոսեան (Միքիա), Ա. Նասիբեան (Կոչարոս).- Պատմագրութիւններ, յուշագրութիւններ,փաստաթղթեր և այլն:
- «Յուշամատեան մեծ եղեռնի» (1965, Թեյրոթ):
- Զ. Կիրակոսեան , Ռ. Սահակեան.- «Հայաստանը միջազգային դիվանագիտութեան և սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերի (1828-1923)» (1972):
- Ա. Փափազեան.- «Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատավարութեան փաստաթղթերի » (1988):
- Ս. Ստեփանեան.-«Գերմանական աղբիւրները հայերի ցեղասպանութեան մասին» (հ. 1, 1991, ռու.):
- Ե. Սրգսեան, Ռ. Սահակեան.- «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմութեան նենգափողումը թուրք պատմագրութեան մէջ» (1963):
- Ռ. Սահակեան.- «Սովետաթուրքական յարաբերութիւնների պատմութեան հակազդեական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրութեան մէջ» (1964), «Տեղասպանութեան պատմութիւնից» (1990):

Ճառ. 2





### Հոգեշնորհ Սեդրիկ վարդապետ Բարիքեանի հանդիպումը Սուրբերեան սրահում

Սոյն քաղաքի մարտի 10-ին Թեհրանի Սուրբերեան սրահում երիտասարդության հետ հանդիպում ունեցաւ Տէր Սեդրիկ վարդապետ Բարիքեանը: Հոգեշնորհ վարդապետը իր հանդիպման բացման խօսքում անդրադարձաւ հայ ազգի գոյութեանը սպառնացող, ներկայ դարաշրջանի մեր ժողովրդի կեցածքով պայմանաւորուած, գոյութիւն ունեցող պատճառներին, որտեղ եւ շարադրեց իր մտահոգութիւնները այդ հարցի նկատմամբ:

Ըստ Սեդրիկ վարդապետի դատողութիւնների, 21-րդ դար թեւակոխած հայը օժտուած չէ ազգային արժանիքներով եւ հայոց ոգով: Եւ կարծես թէ, նա յանուն ազգի որեւէ պարտականութիւններ կամ անելիքներ չունի ու ամեն կերպ աշխատում է իրեն հեռու պահել նման բնոյթի աշխատանքներից: Ներկայիս հայ երիտասարդութեան մեծամասնութիւնը դժգոհ է իր կեանքից, եւ դա գալիս է այն հանգամանքից, որ նա կեանքում չունի փնտրտուք: Գոհ եւ բուրավարած երիտասարդը կամ, կարելի է ասել, հասուն անհատը փնտրել է գտել է արժէք ունեցող հասկացութիւնները, դրանք են՝ սէրը եւ ազատութիւնը: Այդ մարդկային արժանիքները փնտրելու մէջ, հայ ժողովուրդը շատ է թերացել, իսկ այլ ազգերը այդ ասպարէզում, անհամեմատելի առաջադիմել են: Իհարկէ եղել են եւ կան բացառութիւն կազմող մարդիկ, որոնց թիւը, դժբախտաբար, շատ քիչ է, եւ մեր ներկայիս գոյատեւման արդիւնքը այդ փոքրաթիւ մարդկանց աշխատանքն է: Տասնվեց դար դաւանած քրիստոնէական հաւատքից արդի հայերը ժառանգել են լոկ քրիստոնէայ անունը, նշոյլ անգամ չկայ ո՛չ հաւատքից, ո՛չ հոգեւոր զգացմունքներից եւ ոչ էլ հայեցի դաստիարակութիւնից: Մեր հայոց պատմութիւնից անգամ, որեւէ հպարտանալու բան չի մնացել:

Այս ամէնը հիմք ընդունելով վարդապետը դիմեց ներկաներին, եւ օրինակներ բերելով ասաց, որ մեր ազգին ո՛չ անուն է մնացել, ո՛չ

մշակոյթ, ո՛չ լաւ մարդ եւ ոչ էլ այլ արժէքներ:

Եւ այս բոլորի առանցքը վարդապետը համարում է մեր ժողովրդի մէջ արմատաւորուած՝ «անտարբերութիւնը»

ազգային արժէքների նկատմամբ, ինչպէս նաեւ մեր իրաւունքները պաշտպանելու անհամարձակութիւնը: Հայերիս մէջ տարածուած է ղեկավարների քննադատութիւնը, այս անախտոժ երեւոյթը պէտք է հեռացնենք մեր երիտասարդութեան միջից: Հայ երիտասարդների թարմ եւ գործունէայ ուժերը պէտք է դիմեն ղեկավարութեանը, լինեն դրանք թէ՛ հոգեւորական, թէ՛ աշխարհիկ, եւ իրենց ներդրումն ունենան ազգի գոյատեւումը ապահովելու գործում: Միմիայն միասնական ուժերով է հնարատր փրկել մեր ազգը՝ սպառնացող փորձանքից: Եւ այս պայմաններում պէտք է ջանանք, որ մենք յարթեմք կեանքի պայմաններին եւ ոչ թէ՛ հակառակը: Անցեալը չէ, որ մեզ բարիք պէտք է բերի, անցեալը մեզ միայն կարող է մխիթարել:

Այս դատողութիւններից յետոյ վարդապետ Բարիքեանը պատասխանեց ներկաների հարցերին եւ լսեց նրանց մտահոգութիւնները:


1. Հայոց եկեղեցու ուսմունքի թերի մատուցման հետեւանքով, մարդիկ գնում են տարբեր աղանդների յետեւից, ուր աւելի մատչելի է բացարձակ Ս.Գիրքը:

2. Կարիք կայ համազգային ծրագրատրման:

3. Ժողովուրդը եղած հնարատրութիւններն էլ չի օգտագործում եւ չի յաճախում կիրակնօրեայ դասընթացներին:

Այս հարցապնդումներին նա պատասխանեց հետեւեալ ձեւով.

- Աղանդների քարոզիչները վարձատրեալ միսիաներներ են, ԱՄՆ-ից յատուկ գործուղուած անձինք: Օգտելով մեր հոգեւորականութեան թուլութիւնից, նրանք կարողանում են գրաւել ոչ հասուն մարդկանց հոգիները: Նրանք, իհարկէ, խուսափում են բանիմացներից, որոնք գիտեն ինչպէս կարելի է վիճել, եւ իրականութիւնը ի յայտ բերել:



Քանի որ, ըստ մեր դաւանանքի, ամեն մարդ Աւետարանը քարոզելու իրաւունք չունի, եւ այդ մարդկանց դիմագրաւելու համար պէտք է զինել աստուածաբանական գիտելիքներով: Չնայած, որ մինչեւ այս վերջին քսան տարիները, հոգեւորականները չեն ունեցել համապատասխան գիտելիքներ, սակայն արդէն դրանից յետոյ բազմաթիւ աշխատանքներ են տարւել այդ ուղղութեամբ:

4.Կան մարդիկ, որոնք հոգեւոր կրթութիւն ստանալու ցանկութիւն ունեն, բայց դա նրանց չի յաջողում: Ի՞նչ կլինի դրանց հարցը:

Նա այսպէս պատասխանեց. - Ներկայումս կան լայն հնարատրութիւններ Անթիպատ մեկնելու եւ հոգեւոր դասընթացների մասնակցելու համար: Եւ այդ առումով չկայ հոգեւոր եւ աշխարհիկ մարդկանց սահմանափակում: Երկու խմբերն էլ կարող են քարոզչութիւն տանել ամեն-նոր, սակայն Հայոց Եկեղեցու հո-վանու ներքոյ: Այդպիսի երիտասարդական խմբեր կան Լիբանանում:

5.Հնարատր է, արդեօք, որ մեր եկեղեցական շարականները կատարեն արդիական երաժշտական գործիքներով:

Այս հարցի կապակցութեամբ վարդապետը ներկաներին տեղեկացրեց, որ վերջերս Ծննդեան տօներին «Չագ»- երաժշտութեան համերգ կազմակերպւեց հոգեւոր երգերի շարանով, որը արարուեց մեծ յաջողութեամբ: Արդիւնքում, շատ հետաքրքիր էր այն փաստը, որ բոլորը համոզուեցին, թէ մեր աւանդական աւելի հաճելի է եւ հոգեհարազատ, քան նորը:

Վարդապետը Հայաստանին վերաբերող հարցերին չպատասխանեց նշելով, որ այդ մասին կարելի է տեղեկանալ ընդհանուր հաղորդակցական միջոցներից: Իսկ իդիալական որակելով «համազգային ծրագրատրումը», առաջարկեց աշխատանքներ տանել առկայ հնարատրութեան պայմաններում:

Հանդիպման արարտին հոգեշնորհ վարդապետը, առանձին հարցերով իրեն մօտեցողներին, բացատրութիւններ եւ պարզաբանումներ

Թղթակից՝ Արիինէ Սինանեան

տեղ:  
**Հանդիպում «Հայաստանի  
Ձեռնարկատերերի և  
Գործարարների Միութեան»  
նախագահ պրն.  
Արամ Վարդանեանի  
հետ**

Հայաստանից Իրան էր ժամանել «Հայաստանի Ձեռնարկատերերի և Գործարարների Միութեան» նախագահ պրն. Արամ Վարդանեանը, որը ղեկավարում է շուրջ 5000 հոգուց բաղկացած առևտրական և արդիւնաբերական մի միութիւն:

Նրա հետ հանդիպումը կազմակերպել էր Հայոց Ակումբի սրահում, որը բացեց Իրան- Հայաստան Առևտրի Պալատի նախագահ պրն. Լեւոն Ահարոնեանը: Պրն. Ահարոնեանը հակիրճ կերպով ներկայացրեց պրն. Վարդանեանին նշելով, որ նրան հրաւիրել են Իրան երկուստեք առևտրական և արդիւնաբերական խնդիրների քննարկման համար: Նա իր խօսքում մեծ կարևորութիւն տուեց երկու երկրների առևտրական և արդիւնաբերական յարաբերութիւնների զարգացման խնդրին: Ըստ պրն. Ահարոնեանի, այս զարգացումը վերջ կդնի երկու երկրներում էլ գոյութիւն ունեցող արտազատքին և կնպաստի թէ՛ իրանահայ գաղթօջախի գոյատեւմանը և թէ՛ Հայաստանի բարգաւաճմանը:

Ապա Լեւոն Ահարոնեանը խօսքը տուեց Արամ Վարդանեանին: Նա Հայաստանի բոլոր գործարարների և արդիւնաբերողների անունից ջերմօրէն ողջունեց ներկաներին, ասելով.

-Մենք, ինչպէս նշեց պրն. Ահարոնեանը, Հայաստանի խոշոր կազմակերպութիւններից մէկն ենք, մեր աշխատանքներն սկսել ենք արդէն 96 թւականից, տարեցտարի դրանք վերելք են ապրում՝ ստանալով մեծ թափ: Չգտում ենք մնալ զուտ հասարակական կազմակերպութիւն և խուսափել որեւէ քաղաքական բնոյթ ստանալուց: Համախմբում ենք մեծ թով գործարար մարդկանց՝ կրթելու և սովորեցնելու գործարարութեան հմտութեան: Եւ մենք հասել ենք որոշ արդիւնքների. այսօրայ գործարար մարդիկ այլեւս նախկինը չեն, արդէն փորձառութիւն են ձեռք բերել և

իրենց ուժերի սահմաններում կարողանում են յարթահարել օրէնքների անկատարութիւնը: Խորհրդարանում մենք ունենք 10 պատգամատր, որոնք իրենցից ազդեցիկ ուժ են ներկայացնում Ազգային Ժողովում, կարողանում են ազդել օրէնսդրութեան ընդունման վրայ և բարելաւել իրավիճակը: Իսկ ինչ վերաբերում է քիւրդկրատական ապարատի կողմից օրէնքների անկատարութեանը, ապա դա միայն Հայաստանում չէ, որ տեղի է ունենում: Սակայն սփիւքահայերը այդ խնդրին շատ ցատու են մտնում՝ ունենալով իդէալական պատկերացում հայրենիքի մասին: Բայց պէտք է ռեալ աչքերով նայենք, քանի որ Հայաստանը եւս գտնում է բոլոր միւս երկրների շարքում և երբազ չէ:



Սակայն ամփոփելով խօսքս, անցում կկատարեմ աւելի պրակտիկ դաշտ: Մեր այս այցը նոր հող նախապատրաստեց հետագայ համագործակցութեան համար: Նշեմ, որ 1998 թւականին Հայաստանում կազմակերպեց Իրան- Հայաստան առաջին բիզնես Ֆռռումը: Իրանից մասնակցեցին աւելի քան 80 գործարարներ՝ իրանացի և իրանահայ: Մասնակցեցին նաեւ Հայաստանի և Իրանի բարձրաստիճան պաշտօնեաներ: Քննարկուեց հայ- իրանական յարաբերութիւնների անցած էտապը (ժամանակաշրջանը) և ապագայ անելիքները: Իրանը Հայաստանի կարևորագոյն գործընկերն է: 97 թւականից սկսած, Հայաստանի ներմուծման կարածքը փոխում է, քանի որ կայունանում է իրավիճակը, ճանապարհներն աւելի թեթեւանում են և հայ- իրանական կապերը մուտք են գործում լճացման փուլ, այն իմաստով, որ առևտուրը կայունանալով նւազման միտում էր հետապնդում: Այժմ այդ վիճակը փոփոխութիւն է կրում. ներմուծող ապ-

րանքների մի մասը, օրինակ սննդամթերքը, ի ուրախութիւն մեզ, բարձր որակով արտադրում է արդէն Հայաստանում՝ մեր հայ գործարարների շնորհիւ: Դրա հետեւանքով միջազգային մասշտաբով կրճատել է այդ ներմուծումը: Նշեմ, որ պէտք է վերանայ իրանացիների մէջ ձեւաւորած այն մտեցումը, որ Հայաստանը իրենց արտադրանքի շուկան է հանդիսանում: Մենք հիմա մեզ մօտ ունենք շատ կարելու տեղեկութիւններ, դրանք վերաբերում են՝ ներմուծած և արտահանւած ապրանքների քանակին և փոխանցւած գումարներին: Ուշադրութեան է արժանի այն փաստը, որ մեծ գումարներով են ներմուծում այնպիսի ապրանքներ, որոնք կարող ենք արտադրել Հայաստանում՝ օգուտելով ձեր փորձառութիւնից և ներդրումներից: Այսօր Հայաստան է ներմուծում շուրջ մէկ միլիարդ դոլարի ապրանք, ընդ որում, Իրանից՝ մէկ միլիոն դոլարի լուցկի, երբ ի ամօք հայ արդիւնաբերողների, հարկ է յիշել, որ դարասկզբին երկու հայ եղբայրներ Նախիջեւանում արդէն արտադրել էին լուցկի և մատակարարել ողջ Կովկասը: Ընդգծեմ նաեւ այն փաստը, որ մենք փակեցինք մեր լամպի գործարանը, որը տարեկան 150 միլիոն լամպ էր արտադրում, իսկ այժմ ներմուծում ենք դրանք Թուրքիայից և Իրանից: Այդ փաստերը բազմաթիւ են, դրանցից ուզում են յիշատակել խոշորագոյնները, որպէսզի պատկերացում կազմէք, թէ ինչ առումներով էք կարող օգտակար լինել մեզ՝ ձեր փորձառութեամբ:

Օրերս առիթ ունեցանք հանդիպել Իրանի խոշոր գործարարներին, արդիւնաբերութեան նախարարութիւնում էլեկտրոնիկայի և բարձր տեխնոլոգիական ոլորտների ներկայացուցիչներին, ապա այցելեցինք «Փարս Էլեկտրիկ» և «Աբապ» գործարաններ: Մեզ զարմանք պատճառեց այն հանգամանքը, որ Իրանը բարձր տեխնոլոգիայի ոլորտում ունի այդպիսի լայն հնարաւորութիւններ: Օրինակ՝ Փարսի տնօրինութիւնը մեզ արեց հետեւեալ առաջարկը, որ եթէ Հայաստանի շուկայում 10.000 հեռուստացոյցների իրացում լինի, ապա կարելի է կազմակերպել դրանց հաւաքման գործընթացը Երեւանում: Դա կնպաստի

աշխատատեղերի ստեղծմանը եւ անլի մատչելի գներով կիրականացնող նախագիծերի իրականացմանը ու վաճառքը ներքին շուկայում՝ համեմատ երոսպական երկրներից ներմուծող նոյն որակի հեռուստացույցների: Հարկ է նշել, որ Հայաստանում կայ «Մարս» գործարանը՝ անլի լայն հնարատրութիւններով, քան ունի «Փարս Էլեկտրիկը», որն այդպիսի բարձր որակ եւ մեծ քանակութեամբ արտադրանք ունի:

Ասեմ, որ Հայաստանում մենք ունենք ջեռուցման խնդիր: Մեզ մօտ ձմեռները ցրտաշունչ են լինում, եւ իրաքանչիւր ընտանիք այդ խնդիրը լուծելու համար մեծ գումարներ է ծախսում: Իսկ այդ նպատակով շատ ձեռնառու է Արսալ ընկերութեան հետ երկուստեք համագործակցութիւնը՝ Երեւանում ինՖրակարմիր գազային տաքացուցիչների արտադրութիւնը: Քանի որ Հայաստանում տարեկան շուրջ 200.000 այդպիսի տաքացուցիչների սպառումը կայ:

Հնարատրութիւններ կան նաեւ լուցկու եւ ջրային ծորակի արտադրութեան համար, որոնց կապակցութեամբ պէտք է մշակելն կոնկրետ ծրագրեր: Հայաստանը էլեկտրական, ջրային եւ գազային հաշիւչների լուրջ պահանջարկ ունի, սակայն պետական մակարդակով, դրանք ներմուծում են տարադրամի ճանապարհով: Փառք Ասածոյ, որ էլեկտրական հաշիւչները սկսեցինք մենք արտադրել՝ մեր սեփական ուժերով, բայց գազայինը՝ դեռ, ցաւօք սրտի, ներմուծում է:

Հայաստանը, ընդհանուր առմամբ, կատարում է հետեւեալ ներմուծումները. 200.000 դոլարի դեղորայք, միայն Իրանից ներմուծում է 1.000.000 դոլարի օճառ, ընդ որում 20-25 միլիոն դոլարի օճառ եւ լացքի փոշի երկիր են բերում այլ երկրներից, 60.000.000 դոլարի կօշիկ, ընդ որում կար մեզ մօտ կօշիկի հսկայական արտադրութիւն, եւ այլն:

Յատկանշական է նաեւ այն, որ, ինչպէս պրն. Լ.Ահարոնեանը ակնարկեց, հայութեան համար շատ կարեւոր է գաղթօջախի պահպանումը եւ գոյատեւումը, ընդ որում, պէտք է հաշիւ առնենք այն հանգամանքը, թէ իրանահայերը Իրանում բարձր հեղինակութիւն են վայելում՝ շնորհիւ իրենց աշխատասիրութեան, հմտու-

թեան ու ազնութեան, որն էլ կօզմի լայն կապեր հաստատելու մէջ իրանացիների եւ, ընդհանրապէս, Իրանի պետութեան հետ: Մեծ ուրախութիւն մեզ պատճառեց այդ երեսօրը, ինչին ականատես եղանք:

Բայց, ցաւօք, այս բարեացակամ եւ լաւ յարաբերութիւնները հնարատր չէ ստեղծել այլ երկրների հետ:



Մի խօսքով, երկուստեք համագործակցութեան շնորհիւ, մենք կարող ենք, յատկապէս արդիւնարեութեան մէջ, հասնել մեծ յաջողութիւնների: Երկ մենք հանդիպեցինք «Իրանի Հանքերի եւ Արդիւնարեական Պալատի» ղեկավարութեան հետ եւ ստացանք շատ բարեացակամ պատասխաններ, աջակցութեան պատրաստակամութիւն: Պայմանաւորեցինք, որ վարչապետի յառաջիկայ այցի ժամանակ Պալատում կազմակերպի սեմինար, կլոր սեղան՝ բիզնեսմենների հետ: Չնայած դրան կան նաեւ խաչընդոտներ, բայց մենք յուսով ենք, որ դրանք երկու կառավարութիւնները կյաղթահարեն: Առաջինը դա վիզաների բարձր գներն են: Երկրորդը դա այն է, որ պահանջել ենք Հայաստանի եւ Իրանի առեւտրական ռեժիմները բերենք նոյն մակարդակի, Իրանը, գաղտնիք չէ, որ շատ ամուր կերպով պաշտպանում է իր ներքին շուկան եւ այն սալարանները, որոնք բերում են Հայաստան, դրանց գները բարձրացում են կամ դրանց վրայ դրում են շատ բարձր մաքսատուրքեր: Պայմանաւորեցինք, որ մենք պէտք է պատրաստենք ցուցակներ, թէ ինչ ենք ներմուծում Հայաստան եւ ինչ՝ արտահանում Իրան: Այդ ցուցակները Իրանի կառավարութիւնը պէտք է հաստատի, որպէսզի մենք էլ Իրան բերենք հայկական արտադրանք: Արդէն քանի տարի է, ինչ ցանկանում ենք այստեղ բերել շարժիչներ, գործածքներ եւ այլ սալարաններ, սակայն չենք կարողանում: Իհարկէ մեզ ասում են, որ ոչ մի դժարութիւն չկայ,

բայց ամէն տարի կազմակերպւած ցուցահանդէսներից յետոյ ոչ մի արդիւնքի չենք հասնում: Մենք գրուցել ենք նաեւ մեր դեսպանի հետ՝ այստեղ, այն տնտեսական բարիքների մասին, որոնք կան Պարսից ծոցում, առաջարկելով՝ գնալ այնտեղ եւ կազմակերպել որոշ արտադրութիւն Հայաստանի սարքաւորումներով, այնտեղ էժան է ամէն ինչ՝ եւ հողի հարկը եւ էլեկտրականութիւնը: Մենք այս նպատակով ամէն կերպ կփորձենք նաեւ կառավարութիւններից, որ ցուցահանդէսների ժամանակ ցուցանումների վրայ չդրեն մաքսատուրքեր, քանի որ դա կնպաստի շուկաների բացման գործին: Բայց երբ դա հաստատեցում է սովորական արտահանման եւ ներմուծման, շատ խաչընդոտներ են առաջ գալիս: Կան նաեւ այլ առաջարկութիւններ իրանացիների կողմից: Նրանք պահանջում են Հայաստանում խաբէութեամբ իրացրած իրենց գումարները վերադարձնեն: Դա էլ կարեւոր է. երկ, երբ մենք հանդիպեցինք Առեւտրական Պալատի նախագահին, նա ասաց, թէ այլ երկրներում այդ երեսօրը անլի շատ է, օրինակ՝ Ադրբեջանում: Նաեւ կարեւոր է այն հանգամանքը, որ երկու երկրներն էլ պէտք է տեղեկութիւն ստանան, թէ որ երկիրը ինչի կարիք ունի, ինչպիսի հարկեր ու տուրքեր են գանձում, բանկային ոլորտի մասին: Եւ վերջապէս, որոշում ենք կայացրել ստեղծել Հայաստանի եւ Իրանի միջեւ համակարգման կոմիտէ, որը պէտք է լինի կառավարական յանձնարարական ենթակայ: Հինգ հոգի պէտք է լինեն Հայաստանից եւ հինգն էլ՝ Իրանից: Կէտք է նաեւ փորձենք բազմաթիւ հանդիպումների միջոցով ընդհանրացնել առաջարկութիւնները եւ լուծել մի շարք կարեւորագոյն խնդիրներ: Երեւի տեղեակ էք, որ Վազգէն Սարգսեանի ղեկավարման շրջանում մետաղի ջարդոնի արտահանումը կանգնեցել էր: Պատճառներից մէկն այն էր, որ այդ անուան տակ երկրից դուրս էին հանում մեծ քանակութեամբ հաստոցներ, սարքաւորումներ, ինչը մեծ հարւած էր հասցնում մեր երկրի ներքին տնտեսութեանը: Տեղեկացնեմ, որ իրանական կողմից գալիս էին բազմաթիւ անորակ սննդա-

մթերքներ, ապրանքներ: Բայց հիմա իրանացիները շատ ուշադիր են իրենց ապրանքների որակի վրայ, քանի որ մենք բազմաթիւ անգամ ահազանգեցինք եւ պետական ստանդարտների վրայ վերահսկողութիւն սահմանեցինք:

Շատ խոջընդոտներ են ստեղծում մաւ մաքսատներում: Նաեւ չափազանց ծանր անդրադարձաւ առեւտրի վրայ այն փաստը, երբ Հենրիկ Քոչինեանի հրամանով, իրանական բեռնատար մեքենաների վրայ դրեցին ծանր մաքսատուրքեր: Մենք այս հարցով դիմեցինք մեր վարչապետին եւ նախագահին, այն լուծելու համար եւ յոյս ունենք, որ դրական լուծում կունենայ: Սրանք են այն հիմնական խնդիրները, որոնք եւ նշեցի Իրանի եւ Հայաստանի միջեւ առեւտուրը բարելաւելու նպատակով:

Վերջում ուզում եմ ատելացնել հետեւեալը, որ այն մարդիկ, որոնք ցանկութիւն կունենան մեզ հետ համագործակցել, մեր դռները բաց են իրենց առջեւ: Իսկ մենք, մեր հերթին, ձգտում ենք մնալ մեր կառավարութեան կողքին՝ մեր աշխատանքն արդիւնաւէտ դարձնելու համար: Մեր վարչապետ Արամ Մարգարեանը եւս մեր Միութեան մեջ է եւ արժանացել է ոսկէ մեդալի՝ 20 գործարարների շարքում, խոստանալով, որ պատրաստ է ջանք չխնայել Հայաստանում քիզնէսը ոտքի կանգնեցնելու եւ զարգացնելու համար: Նշենք, որ ոսկէ մեդալի արժանացաւ մաւ պրն. Լեւոն Մհարոնեանը, որին պարգեւատրեց վարչապետը անձամբ:

Հանդիպման վերջում պրն. Վարդանեանը եւ պրն. Մհարոնեանը պատասխանեցին ներկաների հարցերին եւ մտահոգութիւններին:

Թղթակից՝ Վ. Վարդանեան

لاستیک سازی آموس

سازنده قطعات لاستیکی صنعتی ، انواع  
 زیره های کفش و کفشهای ورزشی  
 جاده آبعلی خیابان سازمان آب خیابان  
 پنجم شیدایی نبش دوم جنوبی پلاک ۳۰  
 فاکس ۷۳۳۲۶۶۷ تلفن ۷۳۴۹۹۳۰ موبایل  
 ۰۹۱۱-۲۰۴۰۷۴۱

**Ստացած գրութիւն**



Սիրելի ընթերցողներ, Իրանի Իսլամական Խորհրդարանի 6-րդ շրջանի ընտրութիւնների առընչութեամբ դոկտ. Հրաչ Խաչատրեանի ընտրական շտաբից ստացել ենք մի գրութիւն՝ տպագրելու ցանկութեամբ: Ստորեւ նոյնութեամբ հրատարակում ենք այն:

Սիրելի հայրենակիցներ, Դոկտ. Հրաչ Խաչատրեանի ընտրական շտաբը իր շնորհակալութեան խօսքն է ուղղում Ձեզ, որ բռն մասնակցութեամբ նպաստեցիք Իրանի Իսլամական Խորհրդարանի 6-րդ շրջանի ընտրութիւններին բազմամարդ ու ճոխ ընթացք տալուն:

Յատկապէս ցանկանում ենք մեր երախտագիտութիւնը յայտնել բոլոր նրանց, ովքեր ընտրութիւններին մասնակցելուց բացի, իրենց վստահութեան ձայնը տեցին բոլորիս կողմից սիրած՝ իրանահայ համայնքի արժանատր զաւակ դոկտ. Հրաչ Խաչատրեանին:

Սիրելի հայրենակիցներ, Դոկտ. Հրաչ Խաչատրեանի նկատմամբ ունեցած մեր ճանաչողութիւնը թոյլ է տալիս պնդելու, որ նա ներկայ պայմաններում կարող էր հայ համայնքի լաւագոյն ներկայացուցիչը լինել Իրանի Իսլամական Խորհրդարանում, մի բան, որը, ցաւօք, իրականութիւն չդարձաւ: Բայց արձանագրած յաջողութիւնը անմարդկելի է: Նախորդ շրջանի ընտրութիւնների համեմատութեամբ, աճեց մեր թեկնածուի շահած քէների տոկոսային յարաբերութիւնը, այն դէպքում, երբ մեր հիմնական մրցակիցը կորցրեց ձայների զգալի տոկոսը:

Այդ յաջողութիւնը գրանցեց այն պայմաններում, երբ մենք անհաւասար վիճակում, ընդամենը, մէկշաբաթեայ ժամկէտում պատրաստեցինք, եւ միայն համայնքի պատիւը բարձր պահելու պատասխանատուութիւնից ելնելով՝ մասնակցեցինք ընտրութիւններին:

Ազգային հնարաւորութիւնները մեզ չորամադրեցին, թէկուզ Թեհրանի յարգարժան Թեմական Խորհրդում կար բարեացակամ վերաբերմունք, սակայն դա գործ-

նական քայլի չվերածեց: Պարզում է դեռ կան մարդիկ, որոնք կարող են նուրբ կամ կոպիտ ձեռնարկումներով ձայնողել Թեմական Խորհրդի որոշումներն ու ցանկութիւնները, ընթացք, որ երբեք մեր Ազգային Շահերին չի ծառայել եւ չի ծառայելու:

Վերջում ցանկանում ենք, կրկին անգամ, մեր խորագգաց երախտագիտութիւնը յայտնել Թեհրանի, Արաքի, Թարիզի, Ուրմիայի եւ այլ քաղաքների հայրենակիցներին, մաւ յայտնել, որ ընտրութիւնների արդիւնքում Խորհրդարան մտած թեկնածուն, տեսալ դէպքում՝ դոկտ. Լ.Դաթեանը, Խորհրդարանում ներկայացնում է հայ համայնքի ամբողջութիւնը եւ պէտք է պաշտպանի համայնքի բոլոր անհատների շահերը, իսկ դրանից բխում է պարտականութիւն՝ պաշտպանելու համայնքի եկեղեցական միաւորների, դրաբոցների, բոլոր միութիւնների եւ, անհատ առ անհատ, մեր հայրենակիցների շահերը: Պարտականութիւններ, որոնց իրագործման համար, հարկ եղած դէպքում, պատրաստ ենք օժանդակելու՝ մեր բոլոր հնարաւորութիւններով:

Դոկտ. Հրաչ Խաչատրեանի ընտրական շտաբ

قالبسازى و پلاستىك سازى  
 در آوانسيان  
 طراحى و ساخت قالبهاى پلاستىك و  
 باكالىت  
 تهران جاده آبعلى ، خيابان سازمان آب  
 كوچه ششم شرقى ، پلاک ۹  
 تلفن : ۷۳۳۵۰۴۵-۷۳۵۵۷۷۲  
 ۷۳۵۵۶۲۴-۷۳۲۷۹۷۹  
 فاكس : ۷۳۳۹۷۱۵

تون آپ  
 پرواند - وړژ  
 تعمير انواع اتومبيل هاى سوارى  
 تلفن : ۲۵۲۷۱۸۳

# Հայ մայրը

(առանդություն)

Հայոց կրած տառապանքները այնքան էին ցնցել մեր կաթողիկոսների և մտատրականների հոգիները, որ հանգուցեալ աշխարհում անգամ, տակաւին չէին մոռացել: Եւ մի օր էլ իրենց վրդովածութիւնը արտայայտելու համար միատրեցին և Խրիմեան Հայրիկի առաջնորդութեամբ Աստծուն ներկայացան Հայոց մեծերը՝ Վարժապետեանը, Ալիշանը, Ահարոնեանը, Վարուժանը, Թումանեանը, ԲաՖՖին, Միամանթօն, Անդրանիկը և ուրիշ այլ քահանայներ:

Բողոքողների առաջնորդ՝ Խրիմեանը, այսպէս դիմեց Աստծուն.

-Տէ՛ր իմ, Տէ՛ր, բոլոր ժողովրդների մէջ հայ ժողովուրդն էր միայն, որ առաջինը ողջունեց, գնահատեց և իւրացրեց Քո խօսքը: Ապառաժների մէջ եկեղեցի հիմնեց, բարբարոսների մէջ իր արիւնը թափեց, պաշտպանեց, մեծարեց, օրհնեց յիշատակը Քո Որդու: Սպասուեց մեր ժողովրդի արիւնը, բայց չսպասուե՛ց իր սէրը, իր պաշտամունքը, իր համբերութիւնը: Գարեր շարունակ հաւատարիմ մնաց բրիտանութեանը: Եւ, սակայն, վերջ չգտա՛ն իր չարչարանքները, որոնց առարկան դարձաւ դարեր ի վեր: Որդիդ տառապեց երեք օր միայն, բայց մեր ժողովուրդը տառապեց ու տառապում է դարեր շարունակ: Միս ժողովրդները արժանի եղան վարձատրութեան և խաղաղութեան: Բայց Դու, որ ասում ես, թէ արդար ես եւ հայրագութ չհաճեցի՞ր հայ ժողովրդին ես վարձատրել, այլ պարգևեցի՞ր միայն տառապանք, չարչարանք և հալածանք: Ինչո՞ւ եւ մինչեւ ե՞րբ, Տէ՛ր:

Աստուած երբեք չէր լսել մնան լեզու: Սահմուկե՛ց ուրեմն ճիշտ է, որ Հայոց այդքան չարչարել ու տառապել է և այն աստիճան, որ նոյնիսկ հանգուցեալ հոգիների մէջ էլ այդ յիշատակը չի մարել: Ուրեմն գոնէ մէկ օր Հայ ժողովուրդը չի՞ ուրախացել: Վա՛յ, դու անօրէն Գաբրիէլ հրեշտակապետ, անմիջապէս մտածեց Աստուած, ուրեմն դու այսպէ՛ս ես կատարում հրահանգներս:

Եւ Աստուած որոտածայն կանչեց հրեշտակապետին.

-Գաբրիէ՛լ, Գաբրիէ՛լ, այստեղ արի: Միթէ ես քեզ չասացի՞, որ պետք է փորձութեան ենթարկել ժողովրդներին հաւասարապէս, տանջել՝ յետոյ վարձատրել, թէ անպայման պէտք է չարչարանքին յաջորդի ուրախութիւնը, ինչպէս Որդիս էլ պատգամեց իր կեանքով, խաչով և յարութեամբ: Արդ, իմացայ, որ իմ սիրեցեալ Հայ ժողովրդին դարեր ի վեր խաչի վրայ ես պահում ես, գոնէ, մէկ օր չես ուրախացնում: Այսպէ՛ս ես վարձատրում դու հաւատքը, յոյսը և սէրը:

Գաբրիէլ հրեշտակապետը՝ գլուխը խոնարհած, դողահար, անլսելի ձայնով առարկութիւններ արեց:

Այն ժամանակ Աստուած սաստկածայն ասաց.

-Բե՛ր Հայոց դիւանները:

Գաբրիէլը արագ բերեց Հայոց արձանագրութիւնները: Երբ Աստուած թերթում էր դիւանները, Գաբրիէլը բաղոյր ու մեղմ ձայնով սրմնջում էր Ամենակալի ականջին և բացատրութիւններ տալիս: Եւ անհա Աստծոյ դէմքի վրայ ժպիտ երեւաց, ժպիտ, որը ճառագայթեց և ամբողջ եր-

կինքը լուսատրեց: Յանկարծ Աստուած կանգնեց և դառնալով Հայ ժողովրդի առաջնորդներին ասաց.

-Սկրտի՛չ, որդի՛ս, սխալ էք դատել. եւ չեմ զարմանում, որովհետեւ մարդ արարածը միշտ էլ սխալ է դատում: Իմ հրահանգներս գործադրել են անշեղ, անսայթաք ու լիովին: Վարդի թփին փուշ եմ տուել, բայց տուել եմ նաեւ անուշ ծաղիկ: Միշտ չարի կողքին տուել եմ և բարին: Փորձութեան կողքին՝ վարձատրութիւնը: Մեծ տառապանքների և զրկանքների եմ ենթարկել իմ սիրեցեալ Հայ ժողովրդին, բայց եւ վարձատրել նրան մի բանով, որ ուրիշ ժողովրդներին երբեք չեմ տուել: Այլ ազգերը նախանձում են դրան, բարկանում ու ընքոստանում են, բայց արդար էր, որ Հայոց ժողովրդին վարձատրելի մնան մի անգուգական տնօրինութեամբ: Արդ, ուզո՞ւմ էք, որ ետ առնեմ այն, ինչ որ տուել եմ Հայերին՝ աւելի քան այլ ազգերին: Ուզո՞ւմ էք, որ ետ վերցնեմ այն, ինչ որ դուք ունեք գերազանցօրէն: Փոխարէնը պահանջում էք քի՛չ տառապել, լա՛ւ:

Ի՞նչ է, Տէ՛ր, ի՞նչ է այդ, որ մենք չգիտենք,- ասաց Խրիմեանը և հարցական հայեացքով դարձաւ դէպի իր ընկերները:

Աստուած ասաց.

**ԱՆՅ ԱՆՅՐԱ:** Ես միայն ձեր ժողովրդին եմ տուել իսկական մայր: Չկա՛յ հայ մօր նմանը այլ ժողովրդների մէջ: Ի՞նչ է, դժգո՞հ էք այս վարձատրութիւնից:

Խրիմեանը ամօքահար ծունկի եկաւ և ասաց.

-Ների՛ր, Տէ՛ր, սխալ ենք դատել: Թող տակաւին տառապենք, բայց երբեք հաւատքը, յոյսը և սէրը չպէտք է ջնջւեն մեր հոգիներից, մեզ համար հերիք է այն, որ Հայ ժողովուրդը զրկւած չմնայ հայ մօր անգուգակա՛ն դիմագծից, գուրգուրանքից ու ներկայութիւնից:

Եւ Հայոց մեծերը խոնարհեցին Ամենակալի առջեւ, շնորհակալութիւն յայտնելով այն գբասէր տնօրինութեան համար, որ իսկական մայրը շնորհել է միայն Հայ ժողովրդին:



## Ոսկէ Օղակներ

«Լոյս» երկչարաթաթերըը ջերմօրէն շնորհաւորում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին

- օ»-Շ ² Խ³¹»³Y»ձ ¼ անՇԻ ² Խիւե³Y¹»³Y
- Áá»³Y¹»³ օ³¹»³Y»ձ ³¹/² շY ² µ. ³»³Y
- օնՇի ԸY ² ³»³Y»ձ անՇY¹ ² ԸY³Y»³Y
- ¼ ԽY ² ³»³Y»ձ ³»¹ օ: ԽԽ»³Y
- Ի ³»³Y Á á Ի Խ³»³Y»ձ ³»¹/² օá»³Y¹»³Y
- ² ²-ՇY օ»³Y»ձ ² ԽY օ»³Y»³Y
- ԵՇ³ ² ³¹/² անՇY»ձ ² անՇ ² անՇ³Y»³Y
- օ³»³Y ¼ á անՇY»ձ ² անՇ ² ԽԽ»³Y
- Եօ» օ³»³Y»ձ ² անՇ օ: ԽԽ»³Y
- ¼ անՇY ² ³»³Y»ձ Ե»³Y օնՇY³Y»³Y
- ² ² ԸY ² ³»³Y»ձ ² ¼ անՇY ² ¼ ԸY³Y»³Y
- ² անՇY ² անՇ³Y»ձ ² անՇY ² ԸY³Y»³Y
- Ը³ ԵնՇY օ³»³Y»ձ ² անՇ ² անՇ³Y»³Y
- ² անՇY ² անՇ³Y»ձ ² անՇY ² անՇ³Y»³Y

# Շուտով վրայ կհասնի ինՖլիուէնզայի յաջորդ մեծ համաճարակը



Ուաշէլ Վիրթասկի  
Readirs Digest, Nov. 1999-ից  
չնչին յայտարարումներով  
բարգմանեց՝  
Շահէն Յարութիւնեանը

Այդ համաճարակի ժահրը (վիրուս), առաջին անգամ յայտնաբերուց սատկած հաւերի մի պարկի մէջ: 1997 թականի մարտի սկզբներին հոնկ-կոնգոյի մի ագարակատէր հաւերին բերեց եւ յանձնեց տեղի գիտատնտեսական եւ ձկնաբուծական լաբորատորիային: Ինչ-որ մի բան պատճառ էր դարձել դրանց ներքին օրգանների արիւմահոսութեանը, որի արդիւնքում հաւերը վերածել էին զարհուրելի տեսքով մի մասկոյտի:

Քննողները մինչեւ հասան ագարակ, արդէն թռչնազգիների խոշոր մասը մահացել էր: Հաւերի հիւսկէների հերձումից (culture) պարզուեց, որ դրանք մահացել են H5N1 տեսակի թռչնային ինֆլուէնզայից (այսուհետ Ֆլի): Ապրիլին, երկու այլ ագարակներում եւս տեղի ունեցան երեք նման պոռթկումներ, որ մահացութիւնը հասել էր համարեա հարիւր տոկոսի:

Դրանց յաջորդեցին ատելի վատ աղէտներ: Հոնկ-Վոնգի մի հիւանդանոցում, Ֆլի-ի բարդութիւններով մահացաւ երեք տարեկան մի մանչուկ: Ժահրը ախտորոշուեց H5N1, որը մինչեւ այս դէպքի տեղի ունենալը մարդկային վարակի պատճառ չէր հանդիսացել: Եւ սա դեռ աւարտը չէր, Հոնկ-Վոնգի 18 այլ բնակիչներ հիւանդացան H5N1 վիրուսով, որոնցից վեցը մահացան:

Դեկտեմբերի վերջերին, հանրային առողջապահութեան պաշտօնատարները դիմեցին մի լուրջ եւ կտրական քայլի՝ հրահանգելով, որ ոչնչացնեն քաղաքի բոլոր ագարակների եւ վաճառատեղիների հաւերը: Այսպիսով H5N1 ժահրը թում էր, թէ կանխարգելանք: Սակայն ի՞նչ տեսութեանը...

## 1918 թ. Ուրականը

Ֆլի-ի ժահրը մարդու ծանօթ ամենից յարափոփոխ ժահրն է: Բազմիցս պատահել է, որ հարածելուց յետոյ, այն կարող էր տարափոխուել եւ կրկին հարածել: Այստեղ, ի միջայլոց, պէտք է նշենք, որ մարդկային մարմինը վարակագրած (ինուն) է դառնում այն Ֆլի-ների հանդէպ, որոնցով վարակւած է եղել անցեալում, սակայն անպաշտպան է նոյն վիրուսի նոր տարատեսակի դէմ:

Ֆլին կարող է մէկ տեսակից (species) ցատկում կատարել մէկ այլ տարատեսակի վրայ. (օր. հաւից՝ մարդ): Եւ հէնց նրան յաջողի առաջին անգամ հարածել մարդուն, ապա այն հեշտութեամբ «տվորում» է անցնել մէկ մարդուց միւսին եւ այդպիսով պատճառ դառնալ աշխարհատարած մի համաճարակի (պանդեմիկ) բռնկման:

Թռչնազգիների մէջ վիրուսը գտնուում է աղիքներում եւ արտաթորում է կղանքի միջոցով: Այն հազմողները, որոնք վարակուել են H5N1 ժահրով, մեծ հաւանականութեամբ, սրանք շօշափել են հաւի կղանքով աղտոտուած իրեր: Մարդիկ, սակայն, այդ վիրուսը կրում են շնչառական ուղիներում եւ սովորաբար տարածում հազի կամ փռշտոցի միջոցով: Այս ճանապարհով փոխանցող վիրուսները վերին աստիճանի վարակիչ են լինում:

Հոնկ-Վոնգի H5N1 վիրուսը տարբերում է այլ երկրների H5N1 վիրուսից այն բանով, որ քչերին վարակեց, բայց մահացութիւն առաջ բերեց հիւանդներից ամեն երրորդի մօտ: Թւում է, թէ հիւանդների մեծ մասը ժահրով վարակուել են կենդանի հաւի շուկաներում գնած թռչուններից:

Հոնկ-Վոնգի այս համաճարակից յետոյ, մասնագէտներն այն մտավախութիւնն ունեցան, որ H5 ժահրը, որն այդքան մահաբեր հանդիսացաւ, կարող է իրացնել մարդուց մարդ անցնելու ուղին, մի բան, որ «հարուցում է 1918 թ. Ուրականը», ասում է Նանսի Կոքսը՝ ԱՄՆ-ի «Ախտորոշման եւ կանխման կենտրոնի» տնօրէնը:

Այդ տարին էր, որ տեղի ունեցաւ Ֆլի-ի ամենից խոշոր համաճարակը, որն երկու տարուց ատելի կարճ

ժամանակահատուածում խլեց ոչ պակաս, քան 21 միլիոն մարդկային կեանք: Այսպէս կոչւած «Իսպանական» Ֆլի-ի երեք ալիքով տարածուեց ամբողջ երկրագնդով մէկ: Եւ վարակւածներից գրեթէ բոլորը, մահացել են, այսինքն դրանց շուրջ 3 տոկոսը:

Առեւի զին վճարեց մարդկութիւնը: Ֆիլադելֆիայում, այսպէս օրինակ, համաճարակի երկրորդ շաբաթում, դրա զոհը դարձան 2600 մարդ, 4500 հոգին էլ երրորդ շաբաթում մահացան: Քաղաքի միակ դիահերձարանում, իրար վրայ դիպեցին չզմուսւած բազմաթիւ դիակներ, որոնք ցրեցին նաեւ միջանցքները: Ապարդիւն եղաւ աշխարհագրական մեկուսացումը: Ալակայի տարածքում մահացութիւնը հասաւ 90 տոկոսի: Ընդհանուր հաշւարկով, առնուազն 500.000 ամերիկացիներ մահացան:

## Դա կարող է կրկնուել

Իսպանական Ֆլի-ի ժահրը հաւանաբար մարդուն էր անցել թռչնազգիներից: Մասնագէտների կարծիքով, այդ փոխանցումը տեղի ունեցաւ թռչուններից ուղղակի կերպով մարդուն՝ համաճարակի երեւան գալուց մէկ-երկու տարի առաջ: Տեղաւորելով մարդկանց թոքերի մէջ, մէկից միւսին է փոխանցել մի պարզ հազի կամ փռշտոցի ճանապարհով: Նրանք ճակատագրական հետեւեալ հարցադրումն են անում. «Ի՞նչ կլինի, եթէ այն բանը, ինչ տեղի ունեցաւ 1997-ին, Հոնկ-Վոնգում, լինի նոյնը ինչ կատարուեց 1918-ին»: Իսպանական Ֆլի-ի առաջին ալիքը կտրեց անցաւ ամբողջ երկրագնդով չորս ամսում: Այսօր, Լոնդոնից Հոնկ-Վոնգ չլեթքը տեսում է ընդամենը 14 ժամ: Ամեն օր իրականացւում է շուրջ 225 միջազգային չլեթք, իւրաքանչիւրը տեղափոխելով մինչեւ 480 ուղեւոր, ատելի քան 100 կետերի միջեւ:

Հաւանաբար, մենք չենք ունենայ մի երկրորդ համաճարակ, - ասում է Նի Եօրթը համալսարանի բժշկական քոլեջի դոկտ. Էրիկ Կիլթորնը, - բայց ճիշտն այն կլինի, որ ենթադրենք այդ բանը տեղի կունենայ հէնց վաղը: Այս դէպքում եթէ իսկապէս համաճարակ ունեցանք, դա մեզ յանկար-

ծակիի կրեթի եւ արագ կջախջախի բոլորիս: Որպէսզի կարողանանք կանխել մի այդպիսի ահարկու երեւոյթ, անհրաժեշտ է, որ բոլոր ազգերը կատարեն ստորեւ նշած երեք քայլերը:

**1.Նստացնել վերահսկողութիւնը**

Համաճարակի դէպքում իրաքանչիւր օր չափազանց կարեւորութիւն ունի: Ինչպէ՞ս ենք կարող պայքարել մի համաճարակի դէմ, քանի դեռ պարզ չէ, որ արդեօ՞ք եղածը մի համաճարակ է, թէ ոչ, եւ վիրուսի ո՞ր տեսակի հետ է առնչուելու մեր գործը: Ուստի անհրաժեշտ է վերահսկել ու գրանցել մարդկային եւ կենդանական աշխարհի բոլոր մեծ ու փոքր համաճարակների բռնկումը:

Սակայն բոլոր երկրները չեն, որ բաւարար ուշադրութիւն են դարձնում այս հանգամանքին: Որոշ երկրներում, որոնց առջեւ դեռ այս խնդիրը չի ծառայել, մեծ կարեւորութիւն չեն տւել դրան: 1988 թ. Պենսիլւանիայի մահաբեր համաճարակից յետոյ միայն վերահսկողութիւնը արեւի խըստացաւ ԱՄՆ-ում: Շատ մահանգներ վերահսկողութեան ծրագրեր մշակեցին՝ պետքի չէից տրամադրելով ախտաճանաչման սարքաւորումներ:


Շատ էլ գոհացնող չէ այլ երկրներում գործադրած վերահսկողութիւնը: Օրինակ, Համաշխարհային Առողջապահական Կազմակերպութեան (WHO) հսկիչ կենտրոնը ԱՖրիկայում եւ Հարաւային Ամերիկայում, լիարժէք կերպով չի աշխատում:

Որակեալ եւ շտապ հսկողութեան կարիք ունի Չինաստանը, որն ենթադրում է, թէ աղբիւր է հանդիսացել մի քանի նոր վիրուսների, որովհետեւ այնտեղ մարդիկ, խոզեր, հատերը եւ բաղերն ու սագերը ապրում են կողք կողքի, երբեմն նոյնիսկ նոյն յարկի տակ: Չինացիների գաղտնապահութիւնը այս առումով կենաց ու մահուան խնդիր է դառնում:

**2.Առաւել մեծ թուկ յայտնաբերուած պատուաստները եւ դրանց ներարկումները**

Ֆլիւ-ի վիրուսի ճանաչած 15 տարատեսակներից միայն երեքն են մինչեւ այժմ յայտնաբերել մարդու մօտ՝ H1, H2 եւ H3-ը, եւ դրանցից իրաքանչիւրի համար էլ կայ պատուաստ (vaccine), իսկ այժմ ընթացքի մէջ է H5-ի պատուաստի պատրաստման աշխատանքը:

Որոշ մասնագէտներ պնդում են միւս բոլոր տեսակների եւ տարատեսակների համար պատուաստի պատրաստման անհրաժեշտութեանը: Սակայն Ֆլիւն միակ վարակիչ հիւանդութիւնը չէ, ուստի եւ միւս բոլոր տարաբնոյթ հիւանդութիւնների հետ մրցակցելը կարօտում է հսկայական Ֆինանսատրման: Ամէն դէպքում, կառավարութիւնները չպէտք է մտածեն խնայողութիւն անելու մասին, երբ հարցը վերաբերում է վտանգաւոր հիւանդութիւնների դէմ պատուաստման:



Պատուաստումները, ամէն տարի, յարմարեցնում են ժահրի այն տարատեսակներին, որոնք գտնուում են շրջանառութեան մէջ: Բաղձալի է տրամադրութեան տակ ունենալ պատուաստ՝ բոլոր ճանաչած տարատեսակների դէմ: Ներկայումս պատրաստում է տարեկան 80 միլիոն դոզա պատուաստ, սակայն կարիք է զգացում՝ 120 միլիոն դոզայի: Եթէ իշխանութիւնները պատրաստակամութիւն ցուցաբերեն զնելու արեւի մեծ քանակութեամբ պատուաստ, ապա արտադրողները կը քաջալերեն արտադրել արեւի մեծ քանակութեամբ: Պատուաստների քանակութեան մնան արժանազան համաճարակի նաճում կլինի համաճարակի տարածման դէպքում:

**3.Շինճաւոր ծրագրաւորում համաճարակի առնչութեամբ**

Լոս Անջելէսի 1997 թ. երկու համեմատաբար թոյլ համաճարակներ այնպիսի մեծ քանակութեամբ մարդկանց վարակեցին, որ շրջանի գրեթէ բոլոր 81 հիւանդանոցները ճարահատեալ այլ քաղաքներ ուղարկեցին հիւանդների մի մասին, յետաձգեցին նախապէս ծրագրուած

վիրահատութիւնները եւ արձակուրդային հանգստից յետ կանչեցին բժիշկները եւ բուժքոյրերը: Որեւէ լուրջ համաճարակի դէպքում հիւանդանոցային մահճակալները չեն միակ մտահոգութիւնը: Եթէ ի նկատի ունենանք, որ մի նոր պատուաստ պատրաստելը 6 ամիս ժամանակ է պահանջում, ապա այդ ընթացքում հիւանդների պէտք է բուժել հսկայ վիրուսային դեղամիջոցներով. սակայն իրականում գոյութիւն ունի մնան դեղերի վեցամսեայ պաշար: Աւելին, Հոնկ-Կոնգում ապրող շատ հիւանդներ շնչառութիւնը կարգաւորող սարքերի կարիք ունին, իսկ դրանց թիւը խիստ սահմանափակ էր ամէն տեղ:

Իսպանական համաճարակի օրերին բացակայում էին կենսական նշանակութիւն ունեցող շատ սպասարկութիւններ, որովհետեւ պաշտօնեաները հիւանդ էին եւ աշխատելու համար անկարող:

ԱՄՆ-ի «Տարափոխիչ Հիւանդութիւններ Վերահսկող Կազմակերպութիւնը» (CDC) յաջորդ համաճարակի հիւանդների թիւը, միայն ԱՄՆ-ում, հասցնում է 40-100 միլիոնի: Մի պահ պատկերացրէք, թէ ի՞նչ է կարելի անել, եթէ կարիք զգացի ոստիկանութեան, հանրօգուտ սպասարկութիւնների, զինուժի եւ այլնի:

ԱՄՆ-ի կառավարութիւնը 1997 թ.ակնհայտ ի վեր ծրագրի է մշակում համաճարակի դէմ, բայց դեռեւս մի շարք մանրամասնութիւններ ճշտուած չեն դրա վերաբերեալ:

Հոնկ-Կոնգում, համաճարակների բռնկումները մի տեսակ դաս եղան անակնկալ, բայց իրական կացութեանը դիմագրաւելու համար: Հոնկ-Կոնգի դէպքի միակ լաւ կողմն այն էր, որ պատրաստ լինելու անհագանգ հնչեցրեց, այն էլ՝ ճիշտ պահին:

1999 թ. մարտ ամսում Հոնկ-Կոնգի Գիւղատնտեսական եւ Չկնաբուժական Հիմնարկը յայտարարեց, որ մի թռչնաբուժարանի սագերի կղանքի մէջ յայտնաբերել է H5N1 ժահր: Ապրիլին նոյն քաղաքի Հանրային Առողջապահական Բաժանմունքը զննուցեց, որ երկու աղջնակներ (2 եւ 4 տարեկան) ապաքինում են H9 տեսակի Ֆլիւ-ից: H9 վիրուսը, նախքան այս դէպքերի գրանցումը, երբեք չէր հարուածել մարդուն: